

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉՍԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏԻԺԸ

Քանի մը տարիներէ ի վեր, Հայ Հասարակութեան մէջ առաջ եկաւ կսկծալի երեոյթ մը, որ կը տարածուի, կ'արմատանայ անարգել ու սպաննալից:

Փոքրոգութեան, բարոյական անկումի ու իտէալի սնանկութեան յատկանշական արտայայտութիւնն է աս:

Ստելու, զրպարտելու, սեցնելու, վարկաբեկ ընելու ամօթալի հակումը, ցեխոտ հոգիներու կենտական այս անհրաժեշտ պէտքը, որ վրդովիչ արագութեամբ կը զարգանայ, քաջաբերուեցաւ՝ փոխանակ հալածուելու: Անբարոյացումի այս սկիզբը իր օաղմնային վիճակին մէջ խեղդամահ պէտք է ընել: Գաղափարին վերջնական պըղծումը Հայ ժողովուրդին բարոյական մահը պիտի փութացնէր:

Սխալ է ենթադրութիւնը թէ՛ դարերու համակերպութեամբ անշարժացած, անգիտակից ու սարուկ ժողովուրդի մը մէջ, որ իր ազատագրութիւնը իբրև աւելորդ կամ երրորդական խնդիր մը կը նկատէ՝ մեր Հայրենիքը սուգով համակող գէպքերը նպաստած ըլլան խաչագողութեան եւ շարագործութեան մթին ու թաքուն ձգտումներուն:

Ազգային աղէտները երբէք չպիտի կրնային ո՛ր եւ չարագէտ ազգեցութիւն սնենալ մեր ցեղային բարոյականին վրայ, երբէք չպիտի կրնային զայն խաթարել, եթէ՛ անոնք որ իրենց աղտոտ նկարագրին բնական մղումովը հանրային բարոյականը ապականել յանդըգնեցան, իրենց առաջին նենգաւոր շարժումին սանձուած, առաջին թունաւորման փորձին՝ պատժուած, ճրգմուած ըլլային:

Բարոյական այլափոխումին նպաստեց գոհճիկ ու վնասակար հայրենասիրական շողաթանութիւնը զոր ժողովուրդը չփոթեց Յեղափոխութեան հետ:

Ու Երկրին մէջ գործելու քաջութիւնը չունեցողներ, մոռցիր բառ մը բերաննին առնել չհամարձակողներ, անխոհեւ վարմունքի մը հաճոյքը ճաշակելու անկարող

ներ, խեղճ շարժում մը փորձելու անընդունակ գաճաճներ եւ Յեղափոխութեան խորանէն զուրս նետուած թոփթըփուքներ յոխորտանքով պտտեցան արտասահմանի դիրքին ճաճաներուն մէջ եւ աներեսութիւնը ունեցան՝ ինքզինքնին Յեղափոխութեան մեկտորներ ու Հայրենասիրութեան տիպարներ յորջորջելու:

Ուճշմարիտ անձնութիւններ, անկեղծութիւնը ու անշահախնդրութիւնը ծաղրի առարկայ դարձան:

Չարմանալու չէ ուրիշն երբ հրապարակի վրայ չէք տեսներ գործիչ մը որուն անունը վարկաբեկութեան, անպատուութեան ու մատնութեան արատներէն անվճար մնացած չըլլայ:

Այս ընթացքով չպիտի ուշանայ օրո՞ւր այս կարգի տիտղոսներէն զեր) պիտի գտնէք միայն անոնք որոնց նմաններուն գէ՛մ՝ իբրև ստուգուած վատեր՝ ուղղուեցաւ ատեն մը Յեղափոխութեան իրաւարար դաշոյնը:

Իրերու այս կացութեան մէջ, ամէն վատութիւն սպասելի, ամէն անարգ գործ կարելի եւ ամէն անկում հաւանական էր:

* * *

Սլաւաստէն հասնող տագնապի աղաղակը սրտածմիկ ուժգնութեամբ մը կը համարէ մեր ակնարկած խուժուած բարքերը:

Արմենիայի ու Մշակի մէջ հրատարակուած աղեկտուր թղթակցութիւնները կը զայրացնեն, կ'ըմբոստացնեն ամէն անոնք որ իրենց անձէն զուրս՝ ուրիշներու վրայ ալ մտածելու, ուրիշներու ցաւովն ու կեանքովն ալ ապրելու սովորութիւնն ունին:

«Սալմաստ տեղի ունեցած դեպքերը այնքան զարհուրելի են որ գոչքե անոնց առջեւ արդարանաւ Սոսրան Համիտն ալ, Մոռաս պէյն ալ, Սաստերտիկ փաշան ալ...»

«Սալմաստի բռնաբարոյած հայ հարսեր, հարստանարոյած ընտանիքի յոյս հայրեր, ցաւնոցիք եղած գաղթածներու կանանց ու զաւակաց արտասուքներ անկեքն ալ ազատարար ձեռքի մը կը սպասեն:

«Այո՛, վերջին անգամ շեցեք նահատակ Սալմաստ ցիներու աղաչանք պաղատանքը:»

Ահա այս ցաւազին ճիշդն են որ կուզան Սալմաստէն, աշխարհի միւս մասերուն մէջ սփռուած Հայութեան ականջին գարնուիլ:

«Ո՛վ է մեղաւոր որ մեզանոռ ասաչ է եկել այդ զգոռելի տիպը» — Այս տիպը ծնունդն է ապականութեան մթնոլորտին որ գոյացաւ նախակար կամքերու, ժողովուրդին մէջ յուսահատութիւն երգող բուերու երեսէն, յետոյ յեղափոխական անունին տակ սքողեալ մակարոյծներու, Յեղափոխութիւնը իրենց խանութ ընողներու, խարդախներու, կեղծաւորներու անպատիժ մնալէն:

Հոս մենք նպատակ չունինք այս եղածներուն վրայ ողբուկոծերով շատանալու: Խաչագողութիւնը, եկնիչերութիւնը եւ ստորին բնագոյններու պատճառած աւերումները մատնանիչ ընել ու ողբալը չէ՛ բնաւ բարոյական անկուծի ու փտութիւններու դարմանը:

Հոն՝ ուր խօսքը անզօր կը մնայ գործին հրահանգիչ ու փրկարար ազդեցութիւնը անհրամբնաւ է Գործուն Գործել՝ ո՛չ միայն այն հրէշներուն դէմ որ սուրբ պաղափարներու անունով Սալմաստ և այլուր կ'անպատուեն մարդկութիւնը և Յեղափոխութեան պաշտելի գաղափարը, այլ գործել մանաւանդ մաքրելու համար այն մթնոլորտը — որուն վրայ անցողակի ակնարկ մը նետեցինք վերէն — եւ որ կրցաւ արտազրել այդ հրէշները:

Սալմաստի սրիկաները իրենց շահատակութիւնները կ'ընեն, կա՛մ իրրև հասարակ ոճրագործներ, անկախօրէն, և կամ յեղափոխական կուսակցութեան մը գրօշին տակ հովանաւորուած: — Առջի պարագային, Սալմաստցիները իրաւունք ունին ու պարտաւոր են անոնց հետ վարուիլ այնպէս ինչպէս վարուիլ պէտք է թիւրք կամ քիւրտ ոճրագործի մը հետ:

Բայց կ'երկի որ Սալմաստը սուգի եւ ահ ու սարսափի մէջ ձյող գաղանները յանուն յեղափոխական կուսակցութեան մը, յանուն ազնիւ գաղափարի մը կը կատարեն իրենց ոճիրները:

Այս պարագային, խնդիրը շատ աւելի ծանր հանգամանք մը կը ստանայ եւ յեղափոխական կուսակցութիւնները՝ Ազատութեան անունով իրենց պարզած գրօշները անպատուած ու պղծած պիտի ըլլան եթէ անտարբեր կենան կամ չչտապեն իրենց յատուկ միջոցներովը վերջ մը տալ այս գայթակղալից դէպքերուն, որոնց հանդէպ լուութիւնը մեղակցութիւն, իսկ անշարժութիւնը անկարողութիւն միայն պիտի ենթադրեն:

«Վերջին անգամ ևս կը դիմեմ հասարակոյնքեան, եղբայրոյնքեան պաշտպան ներկայացող Հնչակեան եւ Դրոշակեան կազմակերպութիւններուն, եւ վերջապէս բոլոր ձշմարիտ հայերուն, ազատել նախատեսողները:»

Հնչակեան կուսակցութիւնը մէկէ աւելի անգամներ պատճած է այն բողախնդիրները որ Յեղափոխութեան անունը շահագործելու երեսն ու սիրտը ունեցած են: Հա-

ւատարիմ իր սկզբունքներուն և նախանձախնդիր Յեղափոխութեան պատուին՝ անիկա պատրաստ է իր գրօշին շուրջը խմբուած անգամներէն ու եւ մէկը իկարդ կոչել և գայն հարկադրել յարգելու ազատութեան և մարդկայնութեան սկզբունքները որ յեղափոխական ամէն հաստատութեան գոյութեան իրաւունքն իսկ կը կազմեն:

Կը հրախրենք ուրեմն Սալմաստի Հայերը մատնանիչ ընել մեզ գանոնք, եթէ կան անձեր որ՝ Հնչակեան կուսակցութիւնը իրենց վահան ընելով՝ քրդալայիչ արարքներու և սարսաղագեցիկ ոճիրներու թատր գարձուցած կրնան ըլլալ իրենց երկիրը:

ԱՁԱՏ ԽՕՍՔԵՐ

ԽՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ

Տարագայման լաւատեսութիւն մը պիտի ենթադրուի, կարծենք, ցեղային ապերաստան կենտականութեան մը վերագրել — ինչպէս ոմանք կը թուին ընել — վերջին տարիներու մեր խօսքի տենղը: Բազմաթանութիւնը պատմական յատկանիշն է եղած՝ իրենց կործանումին նախընթացին մօտեցած ազգերուն: Հայը ճգնաժամային վայրկեան մը ապրեցաւ ուր իր էութենէն ահագին կտորներ ձգեց եւ ուրկից կրցաւ սակայն բաւական բան ու վտեմ Գաղափար մը ազատել՝ կարող ըլլալու համար իր վերածնութիւնը փորձելու: Եւ անշուշտ չպիտի փափաքէինք որ մեծ ու վերջնական քայքայումներու վաղորդային մահաշուք լուութիւնը իջնար, տարածուէր անոր վրայ: Բայց ներելի էր սպասել որ քիչ մը ձայները դադրէին, շարժումները մեղմուէին, սրտերը համակուէին ու Հայութեան մէկ հարազատ մասին յուղարկաւորութեան ներկայ ու բացակայ հետևողները սուգի ու ինքնամոռութեան երևոյթ մը ունենային:

Բայց այսպէս չեղաւ: Դեռ մեռելները չթաղուած, դեռ հոգեվարքներուն վերջին հոնգիւնը չմարած՝ Խօսքին շղթայագերծուած փրթաւ, ունայն ու մոլիզին:

Շուարումի եւ անստուգութեան շրջանի մը սկիզբն էր, ու փոխանակ օգնութեան հասնելու անոնց որ դեռ կրնային փրկուիլ, փոխանակ աղէտքին դարմանումին եղբայրօրէն խորհելու, փոխանակ՝ հասարակաց տառապանքին մէջ՝ իրարու մօտենալու, կարգերը սեղմելու, իրարու թեւէն բռնելու, զիրար ամօքելու՝ իրարու գէժ ծառայած՝ սկսան իրար հալածել, նախատել, խորտա-

կել: Վեճերը բռնկեցան, ամուլ ու թունալից:

— Ես չեմ... դո՛ւն էիր... դո՛ւն ըրիր... դո՛ւն սխալեցար... ես արդէն գիտեմ... եո ըսած էի... դո՛ւն ես պատճառը... դո՛ւն խաբեցիր... դո՛ւն մատնեցիր...:

Արտասահմանի մէջ մանաւանդ, ճողոպրած ու փախըստական եղկելիներու այս ժխտական մոլեգնութիւնը ազատ ու ընդարձակ հող գտաւ զարդացումի: Հասնող անգրագէտ ու անգաղափար մարդուիը թերթ մը հանեց ու անհնարին անբանութիւններու տուարակը պարպեց անոր մէջ: Երէկուան խեղճուկ տիրացուն՝ ազգային ճակատագիրը իր կոտորած գրչին ծայրը ունենալու այլանդակ յաւակնութեամբը՝ հաստատուեցին շարագրեց, դատաստաններ արձակեց, վճիռներ որոտաց, անցեալին քննադատութիւնը, ներկային ուղղութիւնը, ապագային գուշակութիւնը իրար խառնեց, հաւանեցաւ, ընդունեց, մերժեց, արհամարհեց ու... զրե՛լ համարձակեցաւ:

Ու խօսքին համայնածախ ու խափանիչ տիրապետութիւնը երթալով այն աստիճան սաստկացաւ որ վայրկեան մը սպանաց կասեցնել, չէզոքացնել, կոտորել Գործողութեան կամաւորներու խոյանքը, արդիւի զոհողութիւնը, սպաննել հատաբեր:

Անսահման գործ կար տեսնելիք, ամբողջ վիրաւոր ազգի մը ապաքինումին, կեանքին գործը: Ամէն բան վերսկսելու, ամէն բան դարձանելու, ամէն բան ստեղծելու էր... ու ձեռքերնին գրպանած՝ կը խօսէին, կը խօսէին, կը խօսէին...:

* * *

Բայց, տեսնենք քիչ մը, ինչե՛ր ըսուեցան, ի՛նչ տեսակ ձայներ ելան՝ ի՛նչ բերաններէ...:

Ահաւասիկ խօսողները:
Է՛ն առջ մեր դիմաց կը ցցուին, կը շարուին, իրենց հաստ, յգիացած փորերովը, իրենց կասկարմիր կամ դեփզեղին, վայրագ կամ զանազան երեւոյթովը, անոնք որ «պահպանողական» կը հռչակեն ինքզինքնին:

Չենք գիտեր թէ երբէք գոյութիւն ունեցած է մեր մէջ, մեր ազգային-քաղաքական-բարոյական կեանքին մէջ, պահպանողական գիտակից ու պարկեշտ մարմին մը: Բանաւոր ու պատճառաբանուած պահպանողականութիւն մը՝ ո՛չ ամիրայական շրջանին, ո՛չ ալ անկից ետք՝ անոր ճանցորդը եղող՝ քանի մը սուսել կամ նուազ ազնուաշուք թափթփուցներով, ո՛չ ալ վերջի քառորդ դարու ընթացքին բազմացած մեր գոեհիկ բառովը-ճիւղներուն, մեր արտաոց «մենձ աղա»ներուն առջաբովը կրցած է ներկայացուիլ, իբրև աւանդութիւններու, սկզբունքներու եւ դասանանքներու ուղղութիւն ամբողջութիւն մը: Ազնուականութիւն մըն ալ չենք ունեցած՝ որ Դրամինը չըլլար՝ և որուն կարենայինք առլ պահպանողականի տիրողսը, իր ընկերային — իմաստասիրական լայն առումովը:

Այս բառը օակայն մէջտեղ եկաւ յանկարծ ու արգարացումի միջոց մը, փախուտախ պատրուակ մը եղաւ մեր ունեւորներուն բերնին մէջ, ամէն անգամ որ գիմուեցաւ իրենց՝ իրենց գրածին՝ ամօքելու համար ազգային ահարկու թշուառութիւնը:

— Մենք չէինք պատճառը... անո՛նք էին... մենք՝ պահպանողական... անո՛նք՝ յեղափոխական...:

Անամօթ լրբութիւն մը կայ այդ արդէն աստիկ — եթէ անկեղծ ալ ըլլար — չքմեղանքին մէջ, որովհետեւ այդ մարդիկները սուտ կը խօսին. անոնցմէ ոչ մէկը քաղաքական կամ բարոյական սկզբունք մը ունեցած է, ո՛չ մէկը ինքնաբերաբար եւ ուղղամտօրէն հակառակեցաւ Յեղափոխութեան առաջին քայլերուն, ո՛չ մէկը բացարձակապէս համոզուած էր անոր անյաջողութեանը, ու վայրկեան մը, ամենքն ալ, ափիբերան ու խանդաղատած՝ սպասեցին սխալի Անակնկալին, և ապահովաբար առաջինները պիտի ըլլային՝ եթէ Յեղափոխութեան առաջին խոյանքը յաղթանակով պսակուէր՝ յայտարարելու թէ՛ «իրենք արդէն վստահ էին» ու պոռայու՝ «կեցցէ՛ Յեղափոխութիւնը»:

Պահպանողական՝ մեր Պօլսի «մենձ աղա»ները: Բայց ասոնց պահպանողականութիւնը եկեղեցիին չորս պատերէն անգին անցաւ անգամ մը: Թաղական խորհուրդին սենեակէն գուրս, հիւանդանոցի մը կամ անկերանոցի մը հոգաբարձութեան սեղանէն փնդին՝ իրենց ընկերային ո՛ր ըմբռնումներուն, նոյն իսկ իրենց ներքին կեանքին ո՛ր շնորհալի արարքներուն կամ ստիպութեանցը մէջ երեցաւ, մաքերնուն անգամ անցաւ այդ բառը: Պահպանողական՝ մեր գրեթէ բոլոր վաճառականներն ու վաճառականիկներ. օ՛ այս վերջինները մանաւանդ ու իրենց կէս-անթի գրադիրներն ալ երբեմն, առանց գիտնալու թէ ինչո՞ւ, բայց ոչ նուազ խանդավառօրէն քան իրենց աղաները, որոնց բոլոր պահպանողականութիւնը սակայն — ինչպէս բոլոր իրենց հայրենասիրութիւնը — պաշտա մը պակաս կամ աւելի պատմա քելու տրտում հաշուի մը մէջ կը կայանայ:

Անշուշտ մէկը չպիտի կրնայ մեղադրել մեր արհամարհանքը խօսողներու այս դատակարգին համար: Մենք՝ գաղափարի ազատութիւնը յարգելու ուշադիր՝ մեր պարագ ժամերուն՝ պիտի կրնայինք թերևս, ուղղամիտ հակառակորդներու պէս, վիճաբանիլ իրենց հետ, եթէ իրենք սրտցաւ ազգասիրութեան մը ապացոյցները տուած ըլլային, եթէ իրենց տեսնելու եղանակները, իրենց քաղաքական որոշ ու վերջնական դասանանքն ու ուղղութիւնը ունենային ու քաջութիւնն ու անկեղծութիւնը՝ զայն պաշտպանելու: Ասիկա ամէն երկրի ու ամէն ազգի հասարակութիւններու մէջ քնական ու տրամաբանական երևոյթ մըն է: Ի՛նչ ըրին մեր բոլոր հոյակապ պահպանողականները՝ եթէ Յեղափոխութեան մէջ վստահ մը տեսած էին ազգին գլխուն՝ ինչո՞ւ սկիզբէն հակազ-

գեցութեան շարժում մը չփորձեցին, ինչո՞ւ չհիմնեցին պահպանողական կուտակցութիւն մը, պահպանողական մամուլ մը, նոյն իսկ արտասահմանի մէջ, զէմ դիմաց ու աւելի ազատութեամբ կոտորու համար մեզի հետ: Ասոր համար ի՞նչ կը պակսէր իրենց. նիւթական միջոցները, — օ՛ չէ՛ անշուշտ — հասպարհը. ուղե՞ղ մը ու լուսելու արժանի ձախ մը — օ՛ այո՛ անշուշտ —, բայց հանճարներու պէտք չունէին իրենցինն պէս ողորմելի թեգի մը պաշտ. պանութեանը համար:

Ու բա՛ն մը չըրին: Ու այսօր ուրիշներու ըրածին՝ ու իրենց ցած հրաժարումովը, իրենց զրամին անարգ մերժումովը՝ ուրիշներու շքեղ կեանքերուն ընդունախ վատնումին վրայ շնականօրէն կը խօսին, կը յօտորտան, կը յաղթանակեն...: Բա՛ն մը չըրին: Վայելելու միայն ընդունակ — ատոր ալ յաճախ անկարող — մեր եռամուր պոռժուանքուն համար զոհողութեան, անձնութեան ազնուական մտահոգութիւններ չէին կրնար արհամարհելի, տղայական, անվայել չըլլալ: Եւ յետոյ, անոք ամենքն ալ «դիրքի տէր», «գործի տէր» մարդիկներ են վերջապէս, — գերագոյն ու ստորնագոյն արդարացումը — ու անոնք չէին կրնար ուրիշ կերպով տեսնել ազգային ճակատագիրը, եթէ ոչ իրենց անձնական հանգիստին առաւել կամ նուազ խաղաղ, իրենց առևտուրին առաւել կամ նուազ յեցուն վիճակին մէջէն միայն...: Ու ասոնք են որ՝ Յեղափոխութեան վիրաւոր, այլ անվկանգ կուրծքին դիմաց՝ ելեր սկզբունքներու անունով կը խօսին, գաղափարի մարդու հովեր կ'առնեն, համոզումներու հաւատարիմ մնալ կը ձեւացնեն: Օ՛ համոզուած պատմածի մը ամբողջ մտաւորականութիւնը:

* * *

Խօսողներու ուրիշ գասակարգ մը, պարզապէս տեսակ մը տիւլեթանթիզմ, տեսակ մը պչրանք զրաւ Յեղափոխութեան առաջին շրջանին փութկոտ քննադատութեանը մէջ: Ու տեսանք զմայլելի պարոններ, որոնք Յեղափոխութեան առջի օրը՝ գոյութիւններն անգամ կասկածել չէին տուած, որոնք ու է հանրային գործի չէին մասնակցած, որոնք կեանքերնուն մէջ անձնութեան ու զոհողութեան ո՛չ մէկ ապացոյց տուած էին, որոնք գոնէ յեղափոխական շրջանին մանրամասն ու խղճահար ծանօթութեան չքմեղանքն ու առաւելութիւնն ալ չունէին՝ յանկարծ երևան եկան մութին մէջէն ու սկսան եղածը քննադատել, պատասխանատուութիւններ ճշգիւ, ամբաստանութիւններ բանաձևել, սխալը շիտակէն գանազանել, պաշարին համարձակութեամբ մը, առանց կասկածելու յեղափոխական գաղտնի գործունէութեան մը բոլոր կնճռոտ պայմաններն ու պարագաները, առանց նոյն իսկ հետեւած ըլլալու պատմական իրողութիւններու ու եղելութիւններու ակներև ընթացքին: Ու զուարճալի էր

տեսնել՝ անոնց համար որոնք Գործին զործաւորներն էին եղած՝ թէ ընդհանրապէս այդ քննադատողները չէին գտներ ինչ որ՝ ահամայ՝ դժբաղ ու ճախող եղած էր իրապէս իրենց զործունէութեան մէջ, ու սխալ իմացուած ու գէշ սորվուած մանրամասնութիւններու վրայ կը ծանրանային, ծիծաղելի յամառութեամբ մը: Յետոյ, բնականաբար ախորժելի չէր կրնար ըլլալ անոնց, որ վերջապէս կրցածին ըրած, ճգնած, վտանգուած, տառապած էին Գործին մէջ ու Գործին սիրուն, որոնք կոտորէին կը զոհնային, պարտուած, այլ անվհաս՝ ամբարտաւան յոխորտանքն ու անվերապահ բացարձակութիւնը զոր այդ սիրուն ու երջանիկ պարոնները կը գնէին իրենց սիգապանծ մխտումներուն մէջ: Առկից՝ որտե՛ս զութիւններ, պզտիկ հակառակութիւններ, որոնք անշուշտ չպիտի նպաստէին ազգային համերաշխութեան պէտքին, որոնք մերձեցումի, եղբայրակցութեան տրամագրութիւնները պիտի անգամալուծէին ու բաժնող, հեռացնող անշրջտները պիտի լայնցնէին:

* *

Աւելի անկեղծ ու աւելի արդարանալի եղան խօսողներէն անոնք, որոնք, զեռ պատանի, եռանգով ու հաւատքով կը պատրաստուէին հանրային մտաւորական գործունէութեան մը, առանց շատ չորսդինին նայելու, իրենց զիրքերուն վրայ ծռած, և որոնք մէկէն ի մէկ արմատախիչ գտան ինքզինքնին արտասահմանի անձնօթ ու անկարեկիր հողին վրայ, թուած, ընկճուած, ծերացած: Հազիւ սկսեր էին ունենալ անցած դարձածին տարտամ գիտակցութիւնը: Ուզեցին հասկնալ այս յեղակարծ ցնցումին պատճառը: Յեղափոխութիւնը մատնանիչ ըրին անոնց պիղծ ձեռքեր: Չայն չէին ճանչնար: Անոր վրայօք բաներ մը լսեր էին միայն: Ու Յեղափոխութիւնը թուեցաւ իրենց աչքին, իբրև շիւ ժամադրավայր մը էնթրիկի ու ննջութեան սգորումներու: Եւ երբ տեսան՝ առաջին անգամ ըլլալով՝ անիմաստ ու լպիրշ բերաններ, որոնք կը բացուէին գերագոյն սրբութիւններու անունով երդուննալու, երբ լսեցին Սուտի ու կեղծիքի արհեստաւորներ, որոնք՝ եղբրական շարժումներով՝ փրկութեան ճամբան կը ցուցնէին շուարած ու խելայել ամբոխներու՝ օրտմտեցան, զոհնացան, չուզեցին հաւատալ ու իրենց գայրոյթը պոռացին՝ ո՛չ թէ ազնիւ Գաղափարին զոր հասկցած, ընդունած, ընդգրկած էին հիմա, այլ անոր անարժան ներկայացոցիչներուն, անոր անխիղճ շահագործողներուն գէմ:

Բայց ամէն բան սահման մը ունի, ու կեղծիքն ու Դաւը յաւիտենապէս չեն կրնար սնանիլ Յեղափոխութեան մարմինն փակած ու՛ զայն ապականելու, թուաւորիլու անկարող՝ օր մը կուգայ որ անոնք կը օտհին, կ'իյնան, վերջնական ու անյարիր անկումներուն համար:

Ամէն երկրի մէջ ու ամէն ատեն Յեղափոխութիւնը իր անձնուրաց ու ջերմասնոց ախոյաններուն հետ՝ շահաւորն զիր ու ցածհոգի ներկայացուցիչներ ալ ունեցաւ, ու մեր մէջը չէ՛ որ ծնան՝ առաջին անգամ ըլլալով՝ խաշագողութիւնն ու ժակաբուծութիւնը։ Բայց ասոր համար, կարելի չէ՛, ներելի չէ՛ երես զարձնել Անոր ու ետական ու անարգաւանդ մեկուսացումի մը մէջ անշարժանալ։ Ու սրտապնդող երևոյթ մըն է արդէն տեսնել մեր երիտասարդ ժառանգականներէն ուսանց շեշտուած դժկամակութիւնը՝ այս գասալքութեան աւելի երկար յանձնառու մնալու։

* * *

Խօսողներ ալ կան որոնց հոգեբանութիւնը մասնաւորապէս շահեկան ու կնճառտ է։ Ասոնք չեն ծածկեր իրենց սէրը յեղափոխական զաղափարին, բայց կը շատանան հաստատելով անոր գեղեցկութիւնն ու ճշմարտութիւնը ու կը յամենան անցեալ ու ներկայ յեղափոխական մարմիններու գատափետումին մէջ։ Իրական կարողութիւններ չեն պակսիր, ու ուսանց զործելու անկեղծ ու բուռն փափաքը ունենալ կը թուին, բայց չեն զիջանիր համեստ ճիգերու, չեն համակերպիր աստիճանական իրաւասութիւններու, չեն ախորժիր աննշան անձնորոշութիւններէ։ Երկրորդական անշուք կուսանները, որոնցմէ հարկաւորաբար պէտք է անցնիլ, ուր պէտք է կորովի ու տոկոնութեան ապացոյցներ տալ, հասնելու համար Գործողութեան գերակշիռ զերերուն՝ չեն փորձեր զիրենց։ Իրենց սեփական ծրագիրը, իրենց անհատական հայեացքներն ու զաղափարներն ունին անոնք եւ զորս պիտի ուզէին մէկէն հարկադրել հաւաքական ու նուիրադործուած կազմակերպութիւններու։ Ու կը պատահի որ այս ամենի խօսողները՝ յեղափոխական անցեալ գործունէութեան «սխալները» հաստատած ատեննին՝ պարզապէս այդ գործունէութեան առաջին կարգերուն վրայ սխալած լըջալոռ օրոմտութիւնը կը մատնեն անզիտակցաբար։

Այս յաւիտենական դժգոհներուն բան մը միայն կը մնայ ըսելիք. այն է թէ՛ մենք Յեղափոխութեան դռները բացած ենք միշտ ամենուն առջեւ։ Անոնք որ մեր սխալը ապացուցանել կը յաւակնին՝ թո՛ղ ներս մտնեն, թո՛ղ իրենց տաղանդը, իրենց կարողութիւնը, իրենց իմաստութիւնը բերեն հասարակաց փրկութեան գործին, թո՛ղ գան միանան գործող մարմիններուն և թող շիտա՛կը, օգտակարը, խելացիին թեւադրեն անոնց։ Թո՛ղ խօսքը մէկզի ընեն թիւ մը ու եղբայրորէն գործողներուն յօտենան ու անոնց հետ ձեռք ձեռքի թո՛ղ կոխին մէջ նետուին։ Երբէ՛ք ուշ չէ ասանկ կարիճ որոշումներու համար։ Ու այսպէսով միայն պիտի կրնան գործնականապէս ծառայել իրենց իտէալին — եթէ ունին իտէալ մը։

Հակառակ պարագային ա՛լ արդարացում չպիտի ունենային ու ինքզինքնին յաւետ անկարողութեան պիտի դատապարտէին։ Հանգիստ ու ապահով անկիւնէ մը խօսիլն ու որոտալը շատ զիւրին է ու յանկուցիչ. բայց քանի՛նք պիտի զոհէին իրենց անձնական գործը՝ հանրային նուիրական Գործին համար, քանի՛նք պիտի յանձնանէին անհատական վարդազոյն ապագայի մը յոյսերէն հրաժարած՝ ազգային լաւագոյն ապագայ մը առաջնորդող զրկանքի ու տաժանքի ճամբաներէն երթալու։ Պէտք չենք զգար սրտառուչ մեղադրանքներ ընել իրենց ասոր համար։ Ազատ են ուզածնուն պէս եւ ուզած նըպատակնուն նուիրել իրենց փայլուն գոյութիւնները։ Բայց այն ատեն տարրական վարուողութիւնը ունենալու են գոնէ՛ գործողներուն, զրկուողներուն, անձնագոհներուն առջեւ զսպելու քիչ մը իրենց ցննադատական աւիւնը, իրենց խճճանքի, հեկօքաժի, դժուարահաճութեան ու ւրացումի մեծաժխոր խանդավառութիւնը։

* * *

Խօսողներուն ու ամենէն աւելի բարձր ու խժալուր խօսողներուն մէջն են նաև Դասալիքները։ Անոնք, որ յեղափոխական գործունէութեան առաւել կամ նուազ մաքուր, առաւել կամ նուազ արժանաւոր անցեալ մը ունին եւ որոնք այսօր անձնական ողորմելի նկատումներով Գործէն քաշուած ու կռնակ զարձուցած երէկուան օրագան պաշտամունքին, անհաւատարիմ հանդիսաւոր ուխտագրութիւններու, տեսակ մը գործօն դասալքութեամբ, կրցածին կ'ընեն արգելք ըլլալու, վիժելու, մատնելու համար հոգեին ճիգերը անոնց՝ իրենց երէկուան գործակիցներն ու եղբայրները՝ որոնք կը շարունակեն մաքառիլ։ Ուրախ օրերու կոչնական, Յեղափոխութեան սեղանին շուրջն էին ամենքն ալ, երբ կոխին հացը առատ էր ու թարմ, երբ դեռ փառաւոր պարտութիւններու վաղորդայինն օղութիւնը չէր սպառնար, երբ կարելի էր անոնց հրապուրիչ պայմաններու մէջ պայքարիլ, առանց նիւթական անձկութեան ջլատող խոչընդօտներուն բաղիւնու, առանց զգալու զրկանքին ներսէն յամոռող անագորոյն հալածանքը։ Առաջին խուճապին, առաջին դժուարութեանը, առաջին լքումին՝ ամենքը մէկ քաշուեցան ու... «օբրտ ըրին»։ «Ապերախտ ժողովուրդ».. զիրենք կը մոռնար, իրենց բարօրութիւնը ապահովելու ուշադիր չէր գտնուեր։ Սխալի՛ հոգիներ։ Ինկած արքաներու վեհափառ թաղմութիւնն ունէին աշուրներուն մէջ։ Ամբողջ ազգի մը քայքայումի օրերուն, կարծես իրաւունքն ունենալ կը թուէին յաւերժական երախտագիտութեան մը հնչուն ու շօշափելի ապացոյցներուն, կարծես կը սպասէին որ պալատներ կառուցուին իրենց համար ու հանգստաթոշակներ կապուին իրենց — անսահման, անգիտուած ծառայութիւններուն փոխարէն զորս մատու-

ցած ըլլալ կը յաւակնէին: Երբ տեսան որ իրենց բաղ-
զին ստածող ու իրենցմով ա՛լ զբաղող չի կար, լիզունին
քակուեցաւ, ու սկսան խօսիլ:

Անխորհրդապահութեան ու ձանձնումի հրէշաւոր մե-
քենաներ, անոնք անխղճօրէն կ'օգտուին իրենց անցեալ
գործակցութիւններուն, անցեալ եղբայրակցութիւններուն
իրենց կաակած տեսակ մը հեղինակութենէն՝ տարակու-
տանք ու կասկած հրաւիրելու համար Գործին ու գործողնե-
րուն վրայ: Անոնք զիստողներն են, « մէջէն են », տեսած ու
ապրած են, ու իրենց խօսքը կշիռ մը ունենալ կը թուի
պարզամիտներու և չարամիտ սկիպտիկներու աչքին:

Պզտիկ ամօթալի քէներ ունին, գորո յաղեցնելու ան-
կարող՝ որոնցմէ մղուած՝ չեն վարանիր մինչեւ իսկ դա-
ւաւու Գործին դէմ որուն անունովը կը պարծենային: Ժո-
ղովորդը կը թունաւորեն, զայն Գործէն հեռացնելու, ան-
տարբերելու, յուսահատեցնելու համար ամէն ջանք կը
թափեն, չզաղրելով միևնորն ատեն ինքզինքնին կազմ եւ
պատրաստ յայտարարելու գործի զուխ անցնելու: —
Թո՛ղ Հանդիստնին նային, մենք չէ՛ որ կը գալարուինք
իրենց օժանդակութիւնը վայելելու ըղձանքէն:

* *

Նուազ ծիծաղելի չեն — թէեւ անհունապէս նուազ վը-
տանգաւոր, խեղճերը — այսօրուան խօսողներէն անոնք որ
երկէ՛ երբ իրենց հացը ապահովուած կը կարծէին՝ ձայ-
ներնին փորեքնին քաշած կը լռէին ու Խուլ իսկ կը մա-
յին հեռուէն կամ մօտէն երբեմն հասնող եղբայրական թե-
լազրանքներու ու հրաւերներու: Յանկարծ, երբ գործերնին
կորսնցուցին, շուարումի վայրկեանէ մը վերջը, անմի-
ջապէս մտքերնին ինկաւ հանրային Գործը ու անոր դի-
մեցին ինքնակոչ, ինքնամատոյց, անոր մէջ ապրուստի
միջոց մը տեսնելով միայն: Իրենք իրենցմով լեցուած
գոտոզ ու լիրբ արարածներ, կը կարծէին, վստահ էին
թէ բոլոր դէմերը պիտի կոնակի վրայ բացուին իրենց
առջեւ, թէ սահմակած ու խանդավառ ընդունելութիւն-
ներ կրօպտեն իրենց: Ա՛հ, տեսնելու էր զիրենք... հողին
վրայէն չէին քաշեր, ամպերու վրայ կը դնէին կարծես ի-
րենց յաղթական ոտքերը: Ա՛հ, իրենց արհամարհանքի
ժպիտը... կարելի՞ էր կարծիք մը, դատում մը համար-
ճակիլ իրենց ներկայութեանը: Իրենց աչքերէն շանթեր,
իրենց շրթունքէն պատգամներ կը թափէին: Ժամանակով
վարժապետ եղած, կամ քանի մը յօղուած ստորապրած
ըլլալնին կարծես իրաւունք կուտար իրենց ազգային ճակա-
տագրին վրայ իշխելու: Սկսան հրամաններ արձակել, նա-
սակներ տեղացուցին ամէն կողմ, — « Այո ինչ գործը սապէս
պէ՛տք է ընէք... այնինչ գործին պէ՛տք չէ խանութիք...
պէ՛տք է տուներնիդ զոցէք ու բանալիները ինձի յանձ-
նէք... եթէ ո՛չ հիմնայատակ կը կործանենձ ձեզի... »:
Ու այս անհեթեթ քոքը-միքեմները մինչեւ մատնութեան

կամուրջներու հասան գործին զուխը անցնելու հա-
մար իրենց սաղրած մեքենայութիւններուն մէջ, այս
անտանելի Տօն Բիշօթները ստեցին, կեղծեցին, կեղծա-
ւորեցին ու ցածութեան է՛ն ասպետական ձեւերը գոր-
ծածեցին իրենց շիլ զիտութեան իրականացումին
համար:

Սկիզբները, տխմար հանոյակատարութիւններ, շո-
շորդ ու ըլլամներ քիչ մը զիւրացուցած էին անոնց ճամբան:
Բայց երկար չըջեց ասիկա. ու իրենց ակներն նենգա-
մտութեանը առջեւ է՛ն միամիտներուն ու է՛ն ուղղամիտ-
ներուն աչքը բացուեցաւ: Աւ ընդհանուր, ահաւոր յա-
շած մը եղաւ ասիկա իրենց շուրջը: Այն ատեն, ամեն-
քէն լըուած, խաղը-խայտառակ, պոչերնին կախ հեռա-
ցան, կորուսեցան, ներողամիտ կարեկցութեան մը եր-
գիքին տակ ապաստանելու, ծածկելու, թաղելու իրենց
ամօթալից գոյութիւնը:

* *

Խօսողներու զատակարգ մը կայ սակայն որ է՛ն
վարնոցն ու է՛ն քստմեջին է անկասկած: Գիշերուան ու
տիղմի մէջ օոզոսկող զարշահոտ տիպարներ, որոնք,
անկիւն մը, առաւել կամ նուազ անարգու եղանակներով
իրենց կեանքը ապահոված, պատաստ մը իւղօտ հացի
կտոցած՝ մտքերնուն անգամ չեն անցնոր ու է Հանրա-
յին գործունէութեան հեռաւոր ու տարտամ մասնակե-
ցութիւն, բայց որոնք, իրենց որջին մէջէն, հեւալով կը
հետևին գործողներուն...: Լրտեսի, մուշառի հօգիներ՝
կարելի և անկարելի պատմութիւններ կը փնտոնեն, կը հա-
ւաքեն, կը կարկանդակեն, կը ստեղծեն, ու ատոնց խաղ-
ըութիւնովը զինուած, բեռնաւորուած՝ գուրօ կուզան ի-
րենց թաքստոցէն ու տենդոտ ու ախտաւոր եռանդ մը
կը դնեն զանոնք ամէն կողմ տարածելու և անոնցմով
ժանօթ սիրուած անուններ մատուցել փորձելու: Չի կայ
սուտ՝ որուն առջեւ ընկրկին, չի կայ զրպարտութիւն՝
որ կոկորդիլին սեղմէ: Աչքերնին գուրօ նետուած, շողի-
քոտ լեղունին բերնեքնէն կախուած՝ կը ոպատեն որ տեղէ
մը բան մը իմանան: Դժուարահամ չեն ընտրութեանց
մասին. կ'օգտէ որ սուտ ու զգուշի ըլլայ լսելիքնին:
Ի հարկին նիւթական զոհողութիւններ ալ կ'ընեն՝ եթէ
ստան ու փութկոտ օժանդակութիւններ զանեն իրենց
ծարաւի ու անողուազ ատելութիւններուն ծառայեցնելու:

Ամենքէն վնասուած, ամենուն պժղալի՛ տարտածե-
րէն մարդկային խեղճուկրակ երևոյթներու, հաստա-
միտ ու անպիտակից անբաններու կը մօտենան, կապաւս-
տանին, կը քուսին, կը ժպտին, ձայներնին կը մեղմեն
ու անոնց ժանգոտ ականջներն ի վար քաղցրօրէն կը
փոփօսան:

— Գիտե՛ս Այոնչեանը... մատնութիւն է ըրեր...
զիտե՛ս Այնիչեանը... դրամ շորթեր է, եղբայր... վա՛յ
կիտի յեղափոխականներ... ազգին տունը կը քանդեն

կոր... Վախ... Վախ... Վախ...

Ու հագիւ վայրկեան մը զովացած դուրս տրուած ժահրին թեթևութենէն՝ նորէն կ'իյնան, կը գահալիծին իրենց հոգեկան դժոխքին մէջ, երբ՝ այնքան սրտցաւ ազգասիրութեամբ, այնքան յուզուած խնամտութեամբ տեղեկացուցած ժարգուկին, տաղտուկի անկեղծ ու խանգավառ յորանջուածով մը՝

— Վազ անցիր, ախպար, ինչուս պէտք... նէմէ՛ լազըմ... ինչ կուզեն թո՛ղ ընեն, կ'ըսէ ու կոնակը կը դարձընէ իրենց։

Ա՛հ, իրենց կերպարանքը այդ րոպէին...

Յաճութեան այս ուխտաւորները սակայն բերներնուն վար շնն ձգեր՝ « իտէալի ծառայե՛նք », « գաղափարի կոխ մղե՛նք », « ասպետական ըլլա՛նք յաւէտի » պէս բռնոր, ու՛ ինչ որ է՛ն անհասկնալին ու է՛ն վիրաւորին է՛ ասոնցմէ մէկ քանիններուն ալ յեղափոխական անցեալ գործունէութեան մը պատրական գափնիններուն վրայ հանգչելու երևոյթն է։

Նախանձէ, չկասութենէ ճղակտոր ելլող այս թունալից, մենաւոր ու շարչարուած հոգիներով պէտք չէ՛ երբէք զբաղիլ, պէտք չէ՛ երբէք կանգ առնել իրենց յուսահատ ունոցէն, որպէս զի՛ իրենց բոլոր մթին ոգորումներուն ընդունայնութեանը առջեւ ու իրենց բացարձակ, ճակատագրական անկարողաբեան մէջ կատարած, խենդեցած, լուսնոտ՝ փրփրալով ինքզինքնին ուտեն զիշեր ցորեկ, մինչեւ վերջը...

* * *

Այսպէս խօսքին հրէշաւոր առատութիւնը վայրկեան մը չպակօցեցաւ ու ամէն տեղ լեցուց խուլ ու շարալուր խժտուցով մը։ Համաճարակի պէս բան մը եղաւ ասօկա, ուրկից ամենքն ալ վարակուեցան, ու անոնք իսկ, որոնք իրենց կազմուածքովն ու կոչումովը, իրենց էութեան նկարագրովը, հարկաւորաբար գործեղառ սահմանուած են, որոնք գործելէ դուրս գոյութեան իրաւունք չեն կրնար ունենալ եւ որոնց պարտականութիւնն է անգուլ ու անզարում մաքառիլը՝ տարօրինակ տրամադրութիւններ ցուցուցին խօսքի հանդարտ պայքարներու, լրագրական ապահով ու անվտանգ կոխներու մէջ սպասելու իրենց բովանդակ կորովը։ Ճշմիմ ու անհարկի ժառհոգութիւններ հրապարակեցին, անհատական ու մասնակի ինքզինքրով ժամավաճառ եղան, երբ այնքան կենսական ու այրող հարցեր իրենց ուշադրութեանը կը հարկադրուէին ամէն օր, ամէն վայրկեան։

Բայց ա՛լ կ'օգտէ խօսքը։

Այնպէս որ, մինչեւ աստիճան մը, կը բացատրուէր ասօկա։ Ամէն մարդ կորուստ մը ունէր ողբալու։ Լացողները կը սիրեն պատճառ մը գտնել իրենց տերտին, պատասխանատու մը ձեռք անցնել իրենց քաշածին, ու

ոստիկ ու մարդկային տկարութեամբ մը՝ բազմաթիւ Հայեր մղուեցան ինքզինքնին միխթարելու՝ Յեղափոխութեան կոնակը բեռնեցով ամէն զժարգուկին։ Եստեբ ալ, որոնք՝ կամայ կամ ակամայ՝ ոչինչ կորսնցուցած, ոչինչ զոհած էին, օգտուեցան առիթն, միացան առաջիններուն, թե թիկունք տուին անոնց, Յեղափոխութիւնը ընկճելու միամիտ ու պիղծ յոյսերովը։ Հոգի՛՛ ասօկա։ Յեղափոխութեան ուտերը պէտք եղածէն աւելի ամուր են ատանկ վատ, խեղճուկ ու ետեւէն փորձուած հարուածները զգալու համար։

Բայց չլինեցա՛ւ տրտունջնիդ... ալ բան մնաց ըսելու... Ամբողջ կեանքերնիդ անցեալին քննադատութեամբը պիտի անցնէք... դեռ չսկիւսե՛ք զլի՛ու ցաւ զգալ այն վայրերան մարգարէներէն որոնք հանդիսաւոր, զրե՛ծէ միտտիքական լրջութեամբ մը, կուգան, հարիւրերորդ անգամ ըլլալով, հաստատել թէ Ամբարսիոս պատրիարքը սխալ տեսաւ, թէ Պապ-Ալիի ցոյցը առտուն կանուխ չեղաւ, թէ Պանքայինը վերջալոյսին պէտք էր ըլլար եւայլն եւայլն։

Արգեօք, մինչեւ վերջը, ամէն նոր ու մասնակի ձեռնարկներու անխուսափելի, ճակատագրական յատկանիշը պիտի ըլլայ Յեղափոխութեան ու յեղափոխականներու դէմ հնչող, կրկնուած, յոյնած, մաշած, հետած յանկերը։

Անոնց համար մասնաւանդ, որոնք, սկզբնական ըմբռնելի խարխափումներէ ետքը, հասկցած ըլլալ կը թուին այսօր Յեղափոխութեան տիրական գեղեցկութիւնն ու կենսական անհրաժեշտութիւնը ու կ'ընդունին թէ Հայուն անմեկին ճակատագիրն է ան ու միակ անվիճելի ճշմարտութիւնը, անոնց համար, ա՛լ ատեն է որ խօսքը գազրի։

Աղէտքի ահաւոր օրերէն ի վեր, գարուններ ու ձմեռներ բոլորեցան։ Հայրենի հողին տակ մեռելները լուսեան մէջ փտտեցան, բայց հողին վրայ կիտաւեր կեանքեր դեռ կը քաշկոտուին... Դեռ ամէն բան չէ վերջացած, դեռ ամէն բան կայ ընելիք։ Կ'օգտէ խօսքը։ Թո՛ղ գործելու տրամագիրները առաջ անցնին։

* * *

Խօսք մը կայ սակայն որ թանկագին է ու հարկաւոր։ Մաքրագործով ու վերածնութեան խօսքն է այն, որ արատները պիտի որբէ, կեղծիքը պիտի ճզմէ, դիմակները պիտի պատռէ։ Ընդվզումին կենարար խօսքն է ա՛ն, որ հոգիները պիտի թօթուէ, դաստակները պիտի վեր վերցընէ, սրտերը պիտի ամրապնդէ, ամբոխները պիտի խենդեցնէ ու Ազատութեան ահաւոր ու հրաշալի ճամբան պիտի քշէ, պիտի առաջնորդէ, պիտի տեղացնէ զանոնք։

Այդ խօսքը՝ Գործ է արդէն։

ՏԷԼԻ ՎՍՌՎՍՈ

(ԻՄ ԼՍԱԾՆԵՐԷՄ)

Շարձակառարիւն նախորդ բիւլետէն եւ վերջ

Գտնուելով վանքերու շրջանակի մը մէջ Սեբաստացիներմեանդ էր, երբեմն կոյր ջերմեանդ: Ինչ կարգի ու զարգացման տէր ըլլային կղերականները, անոնց գերմարդկային կողմ մը ունէին. կարգը անոնց վրայ միտաբերութիւն մը դրոշմած էր որուն խորը թափանցել ոչ թէ միայն չէին համարձակեր, այլ չէին ուզեր. այդ բանը եօթներորդ մահացու մեղքէն անմիջապէս վերջը կուգար և ութերորդը կը կազմէր Ս. Նշան, Ս. Սարգիս, Ս. Յակոբ, Ս. Հրեշտակապետ, Խոնուր Կտուր, Ս. Մինաս վանքերը ամբողջ Սեբաստացիներու մահացու մեղքերը, ակամայ ու կամաւոր յանցանքները գիտէին: Ճգնաւորներու շրջան մըն էր այդ ատենը. շատ երիտասարդներ գիշերը վանքերու պաղ սալաթափներուն վրայ ծունկի եկած Սաղմոս ու Նարեկ կը կարդային և հնդկական քաֆիրներու նման հոգիի արբեցողութեամբ կը յափշտակուէին, սուրբերու այցելութեան և հրեշտակներու հաղորդակցութեան վրայ կը խօսէին, օրերով ծոմ կը պահէին և ինքզինքնին աւելի երկինքին մէջ կ'երազէին քան թէ երկրի վրայ:

Ոճրագործութիւն մը, ինչքան ալ աննշան անձի մը վրայ կատարուած ըլլայ, առաջին տարածայնութեան, քննակ մը տարօրինակ սարսուռ կ'ազդէ հասարակութեան, մահը կ'անցնի անոնց առջեւէն իր կմախացած ուրուականովը: Զգայուն հասարակութիւն մը սակայն միայն առժամայ տպաւորութեամբ մը չի բաւականանար, այլ ամբողջութեամբ ցնցուելով վրէժի ամեհի ծարաւ մը կը զգայ ոճիրին հեղինակներուն դէմ: Եւ Սեբաստացի զգայուն է:

Հաճի իսկէն՝ մանաւանդ՝ հասարակ մահկանացուներէն չէր. ան ամենուն կուտն էր, անձնուէր, առատածեան, դէպի աղքատ զսակարգը բարի հօր մը գուրգուրանքը կը տածէր, իսկ դէպի իր մեծերը՝ յարգանք ու պատիւ: Իր բարոյական առաւելութիւնները չէին միայն որ զինքը սիրելի ըրած էին, այլ եւ իր ֆիզիքական կազմը: Իր հասակը բարձր էր, կուրծքը լայն, ճակատը դուրս ցցուած, աչքերը իրենց խօրը անուշ զթութեան մը արտայայտութիւնը ցոլացնելէն վերջ՝ անվեհերութեան սուր նայուածք մը ունէին, թափանցող ու հեռատես. հզօր առողջանութեամբ ձայն մը ունէր, որ մարդու մը խօսելէն աւելի աոխի մը մանչիւնը կը յիշեցնէր: Իր

խորխտ ու համարձակ բնաւորութիւնը թշնամիներու բանակ մը ստեղծած էր իրեն, ստոր ու զաւաղիբ թշնամիներ, որոնք՝ բաց զաշտի վրայ՝ ճակատ առճակատ՝ անոր հետ կուուելու անկարող՝ Սեբաստիայէն երկու ժամ հեռու թաւրայի Պողոզին մէջ դարանակալ՝ սպաննած էին զինքը: Յարձակուած կոնակէն կատարուած ըլլալուն՝ յանկարծակիի եկած էր ու առաջին հարուածին ինկած էր, յետոյ խեղդը եկած էր եղեռնը ամբողջացնելու:

Սեբաստացիներու մը տեսած էր միշտ Հաճի իսկէնի մէջ, և այսօր՝ իր դիակին առջեւ՝ տակնուվրայ էր եղած: Այդ անսպասելի մարդասպանութիւնը անոր մէջ արթնացած էր բուռն ու ապերառան զայրոյթ մը:

Բազմութեան մէջ պզտիկ շշուկ մը տարածուեցաւ, ու վայրկեանէ մը ամբոխը, իր կառքով ու զիակով ու իր հաստ սօփաներով՝ Տէլի Վառվառի առաջնորդութեամբ՝ սկսաւ դէպի Բէլ-Թաշիրի տունը յառաջանալ:

Տեղւոյն կուսակալը՝ Նատրմ փաշան՝ հոն ապաստանած էր սարսափահար: Ալ առջի սէյ ու հպարտ ու տիրական թիւրքը չէր ան, այլ վատհոգի արսրած մը, որ մուծին մէջ իր սարքած ոճրագործութիւններուն պատուհասներէն զահանգած՝ իր ետին կատաղի ամբոխի մը ջախջախիչ բռնուցները տեսնելով՝ մորթը ազատելու ջանացեր էր:

Առանկ պարագաներու մէջ խուժանին աչքէն բան մը չի վրիպիր. Վալիին թաքստոցը գտնուած էր, ու բոպէէ մը արդէն Բէլ-Թաշիրի փառաւոր բնակարանը հայ ըմբոսներու մխորին առջեւ կը սասանէր:

Տէլի Վառվառը նախալարձակն էր: Բակի դուռը ափ առած անընդհատ ջախջախը կը զարնէր: Վերահաս վտանգին անխուսափելիութիւնը ըմբռնելով՝ կուսակալը դուրս եկաւ իր որջէն եւ՝ իր ծառաներով ու ստորազստեալներով շրջապատուած՝ ամբոխը հանդարտեցնել փորձեց: Հակառակ իր բարեկամներուն թախանձանքին՝ առաջինը ինքը եղած էր, որ զրան նիգերը վար առնելով՝ զեղնած, բայց հանդարտ դէմքով մը՝ սեմին վրայ երկցեր էր: Ամէնէն կատաղի գազանն անգամ իր յանդուգն որոնի առջեւ կանգ կ'առնէ, երբ անոր անվեհեր գիրքը կը տեսնէ:

Ամբոխը զարմացման ու զայրոյթի բացաբանչութեամբ մը ընդունեց անոր երևումը. Տէլի Վառվառ քանի մը քալ ընկրկեցաւ:

— Գտնուկներս, զաւակներս, ըսաւ վալին, սպասեցէք և արդարութիւնը իր տեղը կուգայ:

— Կեղծաւորը... ոճրագործներու զլուխը... զարկէք ցածին... դոռաց Վառվառը, ու կատարած վագրի նման առաջ նետուելով վալիին մօրուքէն բռնեց, այս ու այն կողմ քաշկոտեց ու շեշտակի անոր աչքերուն մէջ նայելով անոր երեսն ի վեր թքաւ քանի մը անգամ, ու զայրոյթէն խղզուող ձայնով մը մանչեց:

— Բեզ պէս ցածերը բաղնիքներու զրան առջև կաւ ծախելու միայն արժանի են:

Մասաները վրայ հասան և անհնարին ճիգերէ վերջ հազիւ յաջողեցան վալին ներս առնել, ու զրան նիգերը իրենց տեղը գնել:

Բայց դուրսէն քարերու տեղատարափ մը սկսաւ, ու քանի մը վայրկեանէն ֆէլ թուհիի հոյակապ շէնքին պատուհանները, իրենց ապակիներով ու շրջանակներով, սկսան վար թափիլ. տանը զարգարուն քիւրք ծուրի ծուրի շերտերու բաժնուած՝ օդին մէջ կը թռչէին, եւ երբ ապակիները քարերէն խորտակուած շառաչինով վար կը լեցուէին՝ բազմութիւնը ուրախութենէն խելայեղ՝ կ'ոռնար: Կիանքի մը խորտակումը անոնց սիրտը կտրատած էր ու քանի մը ոճրադարձի մահը պէտք էր որպէսզի մխթարուէին անոնք: Երբ չէին կրնար իրենց վրէժխնայութիւնը յազեցնել լիովին՝ կ'ըզձային զոնէ այդ շքեղ տունին աւերակներուն տակ թաղիլ քանի մը պաշտօնեաներ, որոնք ոճիրներու քաջալերողն եղած էին: Ու եթէ ատիկա ալ անհնար ըլլար՝ շէնքին խորտակումով սփոփանք մը գտնել կ'երազէին:

Ու քանի մը ժամ վերջը, ֆէլ թուհիի բնակարանը որմբակոծուած ամրոցի մը տեսքը կը ներկայացնէր արդէն:

* * *

Անկից վերջը, շատ տարիներ ապրեցաւ Վառվառ: Հին օրերու խօսքը կ'ընէր միշտ, ամէն անգամ որ 1880ր կը յիշէր՝ նոր կրակով մը կը լեցուէր, երիտասարդէ մը աւելի ճկուն՝ արագ քայլերով ներս կը վազէր ու ձեռքը հաստ ու խոշոր սօփա մը՝ դուրս կուգար զայն զրկած համբուրելով, գուրգուրալով անոր վրայ: Քսան տարիէն աւելի է որ կը պահէր այդ փայտի կտորը, իբր յիշատակ այն ահեղ օրուն, ուր անով Հայութիւնը մազնիսացուցեր ու հազարաւորներ ոտքի հաներ էր զէպի վտանգը, զէպի անկարելին, անսպասելին:

Բայց իր կեանքին այդ դիւցազնական օրը անցեալին հետուններն էր մնացեր: Տղի Վառվառ պատուեր, ձեռքեր, ծոռներ էր հիմա: Ու վերջին 95-96ի արհաւիրքի տարիներուն՝ դուրսէն, պատերուն հտեւէն, Անուրէնութեան շղթայագերծումին ձայները առնելով՝ քանի անգամ դացեր, սօփան ձեռքը սեղմել փորձեր էր, բայց իր ուժասպառ, ձեռագրած դատակաները ալ անկարող էին հարկաւոր ճիգին՝ ու Վառվառ ճարահատ՝ զայն մէկդի ձգեր էր:

Ու շատ հեղ կսկիծոտ շեշտով մը կը կրկնէր ան իր ծանօթներուն.

— Ա՛խ, եթէ ամէն հայ կնիկ սօփա մը ունենար իր ձեռքին մէջ աս օն օրերուն չէինք հասներ հիմա:

ԿՈՒՁԸ

— Ժողովուրդը արութեան մղել, գրուաները բարձր, թեւերը կազմ ու պատրաստ բռնելու վարձեցնել, ինքնապաշտպանութեան ու՛ ի հարկին՝ յարձակողութեան կարող ընել զայն, արժանապատուութեան շքացումը արթնցնել անոր մէջ, արդարութեան պայակը ու իր իրատենքներուն ու պարտականութիւններուն գիտակցութիւնը տալ անոր, մարդոչ պէս ապրելու հպարտութիւնը ներշնչել իրեն, — ահա թէ ի՛նչ պէտք է ըլլայ յեղափոխական բրօքականութիւն առաջին անհրաժեշտ մտահոգութիւնը, ահա թէ ո՛ւր պէտք է ձգտին մեր բոլոր ճիգերը, կ'ըսէր ինձի բարեկամ մը, որ Երկրէն կուգար և որ այնչափ ազէկ կը ծանչնար տեղացի Հայուն հօգին, որչափ հայրենի լեռներուն կիրճերն ու քարերը ու Հայրենիքին բոլոր ձածրաները:

— Դժնգակ բան մըն է խոստովանելը, շարունակեց բարեկամս, թէ ընդհանրապէս Բնութիւնն ու կեղեցումը՝ ստրուկ, փութկոտ, մոլեղին կրատրականութեան մը, աղերսանքի արցունքի, աղօթքի միայն հանդիպեցան մերիններուն կողմէ: Հայը, վճռական, վախճանական բույներուն՝ կարծես ձեռքերը կորսնցուցած՝ ծունկի վրայ, երեսի վրայ ինկաւ Քիւրտին ու Թիւրքին առջեւ, վայրագ բիրտուն տակ զուլը գետնին՝ ու անոգք ետթաղանին ի տես՝ զայն իր կեանքին յղձ մերկացնողին ոտքերուն դրաւ իր համակերպած զօհուողի վիզը...

« Հոն, ուր Յեղափոխութիւնը իր ազատարար շունչովը աւրած, սրբած, փտրատած չէր ստրկութեան վատառող մթնոլորտը, հոն Հայը չճաչցաւ երբէք դիւցազնօրէն կամ պարզապէս իբր մարդ մեանելու փորձութիւնը:

« Անասունները, երբ կը հասկնան որ իրենց մահը ալ անխուսափելի է, երբ ճգնաժամուն ազգարար սարսուռը կը զգան, իրենց էութեան բովանդակ պրկումին թափովը կը նետուին՝ աչքերնին զօց՝ իրենց Թշնամին վրայ, որչափ որ վիժնարի, որչափ որ անրնկճելի թուի իրենց անիկա, կը նետուին անոր վրայ, կը զարնեն առոր ու՛ եթէ չկրնան ալ զայն զգետնել՝ զոնէ անսք մէկ կտորը ակուններնուն մէջ խաճած մեռնելու սփոփանքը կ'ապրին իրենց հուօկ վայրկեանին...

« Հայը չկրցաւ ունենալ այդ մխիթարար հոգեվարքը: Անիկա ծոցաւ, ինկաւ, ջախջախուեցաւ. կամ փախաւ, ու — քօտմնիլի պարագայ — իր կինն ու աղջիկը ետին ձրգեց, դահիճներու գժոխային քմահաճոյքին: Հոտ, պարզապէս ոճրագործ եղաւ՝ Ոճիրէն փախչող Հայը: Իր անձին պաշտպանութենէն աւելի՝ իր կնիկան, աղջկան կամ քրոջ կեանքին ու պատիւին պաշտպանութեան պարտականութիւնը պէտք է կեցնէր հայ հայրը, հայ էրիկն ու հայ նորայրը: Երբ ներքեցին սր ներկայ ըլլայ

իր կնկանը բռնաբարումին՝ Հայը, ձեռքերը խաչաձեւած, գլուխը կախ՝ ընդունեց դժիւմ տեսարանը, ու իր աչքերուն առջեւ պղծեցին արգանդը որ կեանք տուած էր իր զաւկըներուն ու ամօքած՝ իր տաժանքի կեանքը: Երբ փախչելու, ճողոպրելու միջոց մը տեսաւ, Հայը հրէշային անապարանքով մը՝ կոնակը դարձուց ու կորսուեցաւ: Տանիքէ տանիք թռչելու, պատէ պատ մխրճուելու, անցնելու, հողին տակէն վազելու կարող եղաւ Հայը, բայց բնա՛ւ կենալու՝ իր օճախին դրան վրայ ու զայն կտրիճի պէս պաշտպանելու, մինչեւ իր վերջին շունչը:

«Պէտք չէ օսակախ շատ մեղադրել Հայը, իր այս կոկիծալի վատութեան ու անօրոտութեան համար: Աօրկա բնական, ճակատագրական հետեանքն էր դարերու օտրիական համակերպութեան, որուն մէջ ծնած, որուն մէջ մեծցած, որուն մէջ մեռած էր անոր հոգին: Ազատ երկիրներու յետին այլասերած մարդուկը չպիտի կրնար՝ անշարժ՝ հանկուրծել Հայուն հարիւր հանգուրժածէն մէկին ու ինչ լեռան պէս հայ հայտուտներ չի կրցան, չգիտցան՝ գործածել իրենց հուժկու դաստակները:»

Այս անգութ ու դաշոյնի պէս միտուող, արիւնոզ խօսքերուն ճշմարտութեանը վրաս ըրած ճնշող ազդեցութենէն կարծես կանգ առած՝ վայրկեան մը լռելի վերջ, բարեկամօ, որ Երկրին մէջ յեղափոխական արկածալից գործունէութենէ մը կը զանար, որ վերջին տարիներու Արհաւիրքն ու հոյակապ Խոսովքը տեղին վրայ ապրած էր ու աչքովը տեսած՝ ոտքի ելլող Հայուն բոլոր յատկանշական այլափոխութիւնները, զիս օրտապնդելու օրտցաւ արտորանքով մը՝ աւելցուց:

—Այս ժողովուրդը յեղափոխական հզօր ու հիմնական գաօտարակութեան մը պէտք ունի—արու, ազնիւ ու յանկուղն արարքներու, զիւցազնական մաքառումներու, մեղսունել զիտնալու գաօտարակութիւնը: Անվհատ, երկաթէ կամքերու, մշտնանդ, հետապնդող ներշնչուածներու, անձնուրաց ու նիտուող տղաքներու պէտք ունինք մենք, մաքրագործելու, նորոգելու, մարգելու, զինելու համար հին ստրուկ Հայուն հոգին, նոր, առայդ ու կտրիճ կուտութեան մը անթափանցելի զրահը հազցնելու անոր: Պէտք է հո՛ն, Երկիրը երթալ ու այն տեղի Հայուն քով, անոր հետ, անոր կեանքովն ու տառապանքովը ապրիլ, անոր թելադրել իր զիմադրութեան ու մաքառումի ճակատապրին զիտակցութիւնը, զայն թու նաւորել Ընդվզումին բարերար ու անդարմանելի թոյնովը, զայն ապստամբ ու զաժան ընել իր վրայ ճնշող շղթաներուն յանձնառութեանը ու կարող՝ պէտք եղած ատեն, մաճէն բռնած՝ արօրը հողէն զուրօ քաշելու և անով իր արտն ու եզները, իր ցորենն ու հացը պաշտպանելու, մինչեւ խնկութեան գերագոյն օրը ուր զայն մէկզի ձգած, անոր տեղ հրացան մը ձեռքին մէջ, պիտի

խոյանայ վերջնական, վճուական բաղխումներուն արդաւանդ ու ազատարբր դաշտը...:

«Տե՛ս, բոլոր այն տեղուանքը, ուր Յեղափոխական Քողափարը օլորդեցաւ, արմատ դրաւ ու ուռնացաւ, հո՛ն իսկ ուր յեղափոխական ձայներու արձագանքները միայն հասան եւ ուր Հայը զիտցաւ կոտրած դանակ մը շարժել կամ ժանգոտած ատրճանակ մը պարպել՝ հո՛ն Տաճիկն ու Քիւրտը—բացարձակ համակերպութեան, ինքնամատուց երկնցած վիզերու, մորթուելու փութացող ոչխարնեմու առջև միայն արի,—կէօ ճամբէն հոս գարձան վազնիվազ, ա՛լ հտենին շնայելու զահանգանքովը: Ու վերջին կոտորածներու և վայրագութիւններու շրջանին՝ ամենէն նուազ—շատ հեղ բնա՛ւ—տուժողները՝ այն հայ դիւղերն ու թաշերն՝ եղան ուր զիմադրութեան կորսովի—նոյն իսկ տարտամ ու վարանոտ—փորձեր տեղի ունեցան հարօտահարուածներու կողմէն:

«Օրինակ մը սամ քեզի, որպէս զի աղէկ ըմբանեւ ըսածիս ճշմարտութիւնը:



1896ին Կ... քաղաքը կը գտնուէի: Կ...ը Փոքր-Հայքի այն հազուադիւտ քաղաքներէն մէկն է ուր Հայը՝ ցեղականօրէն անվեհեր ու օրտոտ՝ քաջութեան ահարկու համբաւ մը կը վայելէր: Կ...ցիին հետ խաղալ չէր ըլլար: Երբ ձի հեծած ու հրացանը գրկին գուրս կուգար ան քաղաքէն ու վտանգաւոր ճամբաներու մէջ տիրաբար կը յառաջանար՝ քիւրտ ու չէրքէզ աւագակները, անոր ձիուն ոտնաձայնը լսելով ու անոր խրոխտ զիմաստուելը նշմարելով շունչերնին կը բռնէին՝ իրենց քարերուն հտեւ քարացած՝ ու իրարու ահանջն ի վար կը փոփոային:

—Շ շա... Կ.ցի է...

ԾՏի Պապ-Ալիի ցոյցէն անմիջապէս յետոյ, երբ պետութիւնները Հայաստանի բարենորոգման ծրագիրը կը մշակէին, հայրենասիրական մոլեգնութիւն մը փրթեր, շղթայազերծուել էր Պօլսոյ Հայութեան մէջ: Յալթանակին զինովութեան ու Ազատութեան նախնորդը աւետող ցնորական նաւակատիկին ժսօրը, համբաւի յուռն ալիքներով գաւառներն ալ տարածուեցաւ, ու Պօլսէն հասնող ձայներուն հմայքէն զզլխած գաւառացի հայերը, խնդի պէս փոզոցները լեցուելով, շիփ շիտակ կը տնկուէին թիւրքին ռոջիւ ու անոր երեսն ի վեր տիրական ու սպանալից նայուածքներով կը հրամայէին Օ՛, շնորհաւորումի ողջագուրանքները իրարու զերկ կը նետուէին խանդավառ ու երջանիկ: Ամենէն աւելի ոգեւորուածներէն էին՝ մինչեւ այդ ատեն իրենց խնդութեանը զրամարկղին հտեւ սքեցած՝ ժանգոտ ոսկիներու հաշիւովը միայն ապրող վաշխառուները, որոնք ազգային վրիժառու յանկերգներ լիաթօք երգելու համարձա-

կութինն առեր էին:

Բայց սեւ օրերը կը ժօտենային: Ազատութեան տր-
րացուած արիւնի փոխարէն միայն կարելի է: Այս ճըշ-
մարտութենէն Հայը չէր կրնար բացառութիւն կազմել,
և Երլուզի եկեղեցորական կոճակները պալատին մէջ որ-
ջացած խելայեղ Տիրապետին ապագայի հսկայ ոճրա-
գործութեան յատակագծերը ժամը ժամին գաւառններ կը
փոխադրէին:

Կ. քաղաքը ամենէն աւելի ըմբօստ ու ալեկոծ տե-
սարաններէն մէկը կը ներկայացներ: Շարաթէ մը ի վեր
առևտուրը զարդեր էր հոն, ու խանութպանները առ-
տուրնէ մինչեւ իրիկուն՝ ապագային իրենց ունենալիք
պաշտօններուն վրայ վիճակ ձգելով միայն օրերնին
կ'անցնէին:

Ընդհանուր ցնծութեան ու երանութեան մասնակ-
ցութենէն կամովին զուրկ, երազուած ու անհամբեր
սպասուած փրկութեան նախատօնակէն հրամարած՝ մե-
կուսացեր, հեռացեր էր մտավաճառ Տիրապետը: Կոչը
կ'անուանէին զայն: Քսանը հինգ տարեկան հագի կար,
սակայն ծերուկի մը դիմաւորներն ունէր: Կոնակին վրայ
կը ցցուէր իր գմբեթաձեւ կուզը: Բնութեան այդ ան-
խիղճ խաղին հետ շատոնց հաշտուեր էր անիկա, ու
օրն ի րօն, երկու ձեռքերն ե տին կապած, իր բախտինա-
կան բեռը կը պտտցնէր, խնդուժերն համակերպութեամբ
մը: Անտակվարի, առակախօս ու սրամիտ՝ շուկայի
մարդոց հտպիտն էր գործեր ան: Առտու իրիկուն վե-
րէն վար ժան կուզար պզտիկ շուկային մէջ ու իւրա-
քանիւր խանութի առջեւ կանգ առնելով՝ թօհալ խօսք
մը կը նետէր՝ զոնէն ներս ու կ'անցնէր:

Բայց առենէ մը ի վեր Կուզին պէտքը չէր զգացուեր:
Առանց անոր ալ կը խնդային, ու մոռցեր էին զայն, հաւ քջա-
կան խօլ բերկրութեանը մէջ: Ամէն մարդ ուրախ էր, աւետ-
ւած ամբօխներու յաղթական ու միամիտ ուրախութեամբը,
որ խթանի պէտք չունի, որ ինքնիրեն ու ինքնիրմով գոհ՝
կը պոթկայ, կը յորդի, կը տարածուի, կը լեցնէ: Ու
Կուզն էր հիմա որ՝ շարագուշակ նախազգացումներով
մտահոգ՝ պէտքը կըզգար միւսներուն խնդուքին սըր-
տապնուովին, ու միս մինակ կ'երթար՝ զեզերիլ, իր
սապատով միտոն, վիզը ծռած, թաղժապին արտայայ-
տութեամբ մը գոր ոչ ոք կը հասկնար, ուրկից ոչ մէկուն
յափշտակութիւնը կ'ընդմիջուէր:

Թիւրքիայի ներքնագաւառներուն մէջ, ասանկ հաշմ-
անդամները խորհրդաւոր էակներ են: Գաղանիքներու
խորը թափանցելու գերազանց կարողութիւնն ունին ու՝
շատ անգամ՝ ամենագէտ կ'ըլլան անոնք: Իր վրայ ժան-
րացող այս անսովոր տիրութեան հետ, Կուզին նիտա ու
կացն ալ փոխուած էր: Խանութին մէջ, մսագործի խօ-
շոր եթազաններէն մէկը իր կտացած մէջքը փաթ-
տող շալի ծալքերուն մէջ խրեր էր, և իրիկունն առն
վերապառնալուն՝ պատէն կախուած շէշխանէն վար կ'առ-

նէր ու գորգուրանքով անոր շախմախը կը մաքրէր, եր-
կաթը կը իւղէր, ու պարապ ժամերուն ալ գնդակներ կը
թափէր:

Մօտէն ու հեռուէն ականջին բաներ մը հասեր էին:
Թիւրքերը՝ զայն կէս մարդու տեղ գնելով՝ ամէն բան կը
խօսէին անոր առջեւ:

— Վերէն հրաման եկած է... Հայերը պիտի ջարդենք,
կը փսփսային իրարու:

Եւ սակայն արիւնի խրախճանքին պատրաստուող
այս գահիճները, անյիմազրելի վախէ մը բռնուած, սըր-
տաաբօփ կը հարցնէին ինքնիրենց՝ Թէ ի՞նչպէս պիտի
կրնային զուրկ ելլալ տեղացի Հայերուն հետ, որոնց ա-
մենքն ալ կտրիճ էին, զէնքի վարժութիւնն ունէին, ու լաւ
դանակ խաղցնել գիտէին:

Հայերու հայրենասիրութեան յեղակարծ ժայթքումը
մանաւանդ սարսափահար կեցուցած էր Տաճիկները, ի-
րենց եղբձնական վարանուովին մէջ: Պզտիկ շարժում մը,
յարձակողական թեթեւ քայլ մը բաւական պիտի ըլլային
զանոնք բոլորը մէկ Հայուն ստքին առջեւ բերելու, աղա-
շաւոր ու ածօթապարտ: Սակայն խօսքի հայրենասի-
րութեամբ էր միայն որ մերիները կը բաւականանա-
լին, ու թիւրքերը օշտուելով այդ անվառ յոխորտան-
քէն՝ ներքէ ներս կը պատրաստուէին: Քանի մը շարժուան
մէջ նահանգին կեդրոնական քաղաքէն ահապին քանա-
կութեամբ զէնք եկած ու բաժնուած էր անոնց մէջ: Շըր-
ջակայ պիւղերուն ջիւրակը վարձքով բերած, իրենց
տուններուն մէջ պահած էին: Լաւ շրկուած էր նաև շատ
մը ջիւրա աշիւթներու պէտերուն գալու և քաղաքը
պաշարելու:

Հոկտեմբերի վերջերը արդէն Կ. ը հազարաւոր ջիւր-
տերու շղթայով մը շրջապատուած էր: Հայերը սկսեր
էին սթափիլ ու զգալ վերահաս վտանգին ահեղ սպա-
նալիքը, որ իրենց հայրենասիրական պինտութեան օրե-
րուն՝ կամացուց մը ժօտեցած, եկած սաքը պրած էր
իրենց սեմին վրայ:

Աճապարտ խանգաժառութեան յաջորդած էր հիմա
աճապարտ պատրաստութիւն մը, և զէնքի կտոր մը ու-
նեցողը՝ անոր կառչած՝ ակընդէտ կը սպասէր վաղուան
անակնկալին:

Շըջակայ քաղաքներէն, օրը օրին, աւերուծի, թա-
լանի ու արիւնհեղութեան լուրեր կը հասնէին: Հայերը
կը ջարդուէին անխնայ ու անարգել, ու — վիթխարի, հրէ-
շաւոր հեզութիւն — Կոտորածը իր արիւնտա Արհա-
ւիրքը կը պտտցնէր մասնաւորապէս այն նահանգներուն
մէջ որոնց համար Երլուզի Դիւահարը Բարենորոգման
Մրապիւրը ստորագրեր էր:

Ամէնէն սահմուկ ու ամէնէն ըմբօստացուցիչ երե-
ւոյթը այն էր սակայն որ՝ ամենի ամբօխներու յանկար-
ծական, անբացատրելի ինքնալքումովն ու վատութեամբը՝
քաջութեան համբաւ վայելող ու իրապէս քաջ Կ. քա-

զաքին մէջ, բոլոր այն Հայերը որ երէկ ազատութիւնը կ'երգէին ու կը պոռային, բոլոր անոնք որ երէկ թիր- քերուն երեսն ի վեր բռունցքներն կըսպանային ու ապա- ցայ ազատագրուած Հայաստանի մը հանրային պաշ- տօնէութիւնները իրարու մէջ կը բաժնէին, երանելի ինքնա- վստահութեամբ մը, այսօր, կամ կորսուած էին մէջտե- ղէն, կամ ստորին սլքտուսներով թիրքերուն հետ իրենց կեանքին ապահովութիւնը օտակարկելու անարգու դիմու- ներու ելած էին:

Շարունակելի

ԱՊՏԻԻԼ ՆՍՄԻՏ

ՆԵՐՔԻՆ ՄԱՐԴՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Սուլթանին հագուստը-կապուստը շափազանց պարզ է, եւ վայելչութեան կամ նորաձեւութեան ամէն մտա- հոգութիւններէ զերծ: Մութ գոյներու համար, թուխ, կարմիր, շագանակագոյն ու սեւ, նախընտրութիւն մը ունի: Նեղ տափատ մը, թաւիչէ վեպոն մը՝ իր բոլոր հագուստներուն պէս մուշտակապատ—որովհետեւ շափա- զանց մսկատ է,—կամ բաց կապոյտ չուխայէ վեպ մը կարմիր ճուրջով, ահա սովորաբար իր անտնին տարազը:

Յաճախ ատոր վրայէն կը հագնի խորխա մը, տե- սակ մը տաճկական կրկնոց, շագանակի գոյնով: Իր բու- լոր հագուստները ծածրակին մօտ ներսէն թխմուած են՝ հարթելու համար իր ուտին գիծը և ոքողելու համար լի- թեւ կուզը զոր Ալլահ շնորհած է իրեն: Սկրալըքի ա- բարողութեան ատեն, որուն ներկայ կը գտնուի պղնձէ կոճակներով պարզ մեկնոցով մը ծածկուած—որ հետե- ակ զինաստրներուն մեկնոցին կը մօտենայ—իր շուրջը գտնուողները կ'ըսեն թէ տակէն պողպատէ զրահ կը կրէ:

Իր հանդերձարանը անատ չէ, ու անատաձեռն է իր հին հագուստներուն համար զորոնք իր սիրականներուն և ծառաներուն կը բաշխէ: Փորձը ահաճելի է իրեն, որովհետեւ վտանգ մը կը տեսնէ ատոր մէջ, բնաւ զեր- ձակ մը պատիւ ունեցած չէ իր ձեռքովը կատարելու այդ զործողութիւնը: Իրեն թող կը տրուի միայն բաւա- կան հեռուէն ներկայ գտնուիլ ատոր՝ աչքովը դատելու համար հագուստին թերութիւնները և հարկաւոր վեր- ուղղումները: Ահա ի՛նչպէս Ֆրանսացի մը, Պ. Լ., կայ- սերական գերձակներէն մէկուն անաջին ձեւողը, մեզ կը

պատմը այցելութիւն մը զոր տուած էր այդ դժպէտի յա- ճախորդին. «Նորին Վեհափառութեան սենեակներէն մին մտայ, ուր իր հանդերձապետը, Իսմէթ պէյ, ըիչ ետքը եկաւ ձեռքէս առաւ փորձուելիք սթամպուլիներ և մօ- տակայ սենեակ մը տարաւ: Մէկ քանի վայրկեան յետոյ, զուտ մը բացուեցաւ, և սուլթանը, անկատար և լոկ ճեր- մակ զերձանով շուլուած սթամպուլիներ հագած երեսն եկաւ, ու շիպ շիտակ քաշեց, ինէ երեք չորս մէթը հեռու- սենեակին ծայրը երթալէ յետոյ, ետ գարձաւ, եւ ան- յայտ եղաւ: Փորձը աւարտած էր: Իսմէթ պէյ, յար- գալիք կեցուածքով մը և ձեռքերը խաշաձեւած, ներկայ էր այս տարօրինակ տեսարանին, որու միջոցին գա- ղափար մը կազմելու էի թէ հագուստը պակասութիւն մը ունի թէ ոչ: Կը հասկնաց հարկաւ թէ գիրին գործ չէ մէկու մը հագուստը շինել այս պայմաններուն մէջ:»

Նորին Վեհափառութիւնը շատ պզտիկ սոք մը ունի: Անհրաժեշտ իսմէթն է նորէն որ պաշտօն ունի փորձե- լու կայսերական կօշիկները, որոնք Բերայի յոյն կօշ- կակարի մը կ'ապսպրուին: Ամենքն ալ բարձր կուսնկներ ունին, սունկով պատած:

Ապտիւլ Համիտ, մսկատ և գրեթէ ճաղատ, բնաւ ֆէտը չի հաներ, գոր պիտուն վրայ քաշած է եւ երբեմն երբեմն ետեւ կը նետէ մեքենական շարժումով մը: Այս ֆէտը, շատ բարձր եւ շատ լայն, շատ անշնորհք ձեւ մը ունի ու բոլորովին կը տարբերի Ապտիւլ Ազիզի ֆէ- տէն, բայց, սուլթանին բոլոր մարդոցմէն բնականաւոր է, թէկուտ ծանր է ու չի վայլեր:

Կայսերական արդուագորգին զուխը փակելէ առաջ, խօսք մըն ալ գրպաններուն մասին ընենք: Ապտիւլ Հա- միտ շատ գրպան ունի, ամենքն ալ խորունկ, և տարօրէն ձեւերով զորոնք ինքն իսկ կը նշանակէ իր գերձակին, ու այդ գրպանները թէ՛ պահարանի և թէ՛ զինարանի տեղ կը ծառայեն իրեն: Ո՛չ միայն անոնց մէջ կը գնէ լըր- տեսներու բազմաթիւ տեղեկագիրները զորոնք սովորու- թիւն ունի երկար ատեն պահելու եւ քանիցս կարդա- լու դասակարգելէ առաջ, հապա նաև հոն կը պահէ ե- ռեք թէվալդերները որոնցմով միշտ զինուած է: Սովորա- բար, զրպանի խնդիրը, թէ՛ իրեն և թէ՛ օւրիշներու զըր- պաններուն խնդիրը, ահագին տեղ կը բռնէ կասկածոտ միակետին մտահոգութեանցը մէջ: Այդ ծածուկ ծալ- քերը, այդ խորհրդաւորօրէն մութ ձեղքերը, որոնք ան- թափանցելի թաքստոցներու զաղտնի դուռն են, զբալի կերպով զինքը անհանգիստ կ'ընեն, և յօժարափոյթ պի- տի արդիւէր զանոնք իր հպատակներուն եթէ համար- ձակէր այլքան բանաւորական օրէնք մը հրամայել: Սա կայ որ եթէ ներքի է զրպան ունենալ, սծիր մըն է ձեռքը հոն տա- իլ կամ հագուստներէն մէկուն կոճակները քակել փատիշահին ներկայութեանը: Ուստի եւ իր սե- նեկապետները և քարտուղարները պարտին իրեն ներ- կայանալ իրենց բերած պաշտօնագրերը ձեռքերին բր-

նած: Նախկին մեծ եպարզո Սառլզ փաշա շնորհա-
 զուրկ եղաւ ու Լէմնոս աքսորուեցաւ— թերևս պարզ գու-
 գապիպութիւն— մէկ քանի օր ետքը այն ձախօրջ շարժու-
 մէն զոր ունեցաւ պայտերական ունկնդրութեան մը մի-
 ջոցին: Ն. Վեհափառութիւնը իրմէ պաշտօնագիր մը ա-
 զած ըլլալով, նախարարը ձեռքը իր սթամպուլինին
 ներքին գրպանը խոթած էր՝ անկեց հանելու համար յիշ-
 եալ պաշտօնագիրը: Ապտիւլ Համիտ գտաւ որ շարժումը
 գեղեցիկ չէր, մանաւանդ որ յոյժ վտանգալից:

* * *

Սուլթանը ուշի ուշով կը դիտէ սակաւաթիւ անձերը
 գործնք առանձին կ'ընդունի, եւ անձկութեամբ կը հսկէ
 անոնց շարժումներն ամենապոյզն փոփոխութիւններուն:
 Կը սոսկայ յանկարծական շարժումէ, արագ քայլէն, ա-
 նակնկալ ձեւէն, և վայ անոր որ այդպէս տկամայ ա-
 հարեկէ այդ մենամուր որ յարածամ ենթակայ է հալա-
 ծանքի ցնորքին: Վրան միշտ հրազէն մը պահելու սո-
 վորութիւնը զարհուրելի սպառնալիք մը կը պարծնէ իր
 վախը, որ մինչև հիմակ, երկու սեռի բազմաթիւ ան-
 մեղներու մահուան պատճառ եղած է:

Յիշենք միայն իր պարտիզպաններէն մին որ օր մը
 Երլարգի պարստանին մէջ կ'աշխատէր, ծառի մը տակ
 կծկտած որուն տերևոյքը կը ծածկէր զինքը, երբոր,
 սուլթանին գայր տեսնելով անմիջապէս շտկուեցաւ՝ յար-
 գալիք դիրք մը առնելու համար: Ապտիւլ Համիտ, այդ
 մարդուն յանկարծական երեւումէն սարսափած, եւ անոր
 գէշ պիտաւորութիւններ վերագրելով, անմիջապէս վրան
 կրակ ըրաւ: Խեղճը թիչ ետքը հոգին աւանդից. բոտ ու-
 բում վրան գէնց ճկար, հարկ եղաւ խոստովանիլ թէ
 սխալ մը գործուած էր, և թէ խեղճ մարդը զոհ գացած էր
 փոխադարձ վախին գոր իր տէրն եւ ինքը իրարու ներ-
 շընշած էին:

Յաճախ, Ապտիւլ Համիտի յանկարծական սարսափ-
 ները, առանց այդ եղբրական հետեւանքները ունենալու,
 տաճանելի և անջնջելի յիշատակ մը կը թողուն անոնց
 որ պատիւր ունեցած են այդ սարսափը ներշնչելու:

Սուլթանը օր մը նստած էր ծովային գործերու նա-
 խարար Հասան փաշայի եւ վախճանեալ Աքիֆ փա-
 շայի (այն ատեն Պետական խորհրդին նախագահ) միջև:
 Աքիֆ փաշա, տեսնելով որ օյի հոսանք մը իր վեհապետը
 նեղել կը թուէր, մէկէն ի մէկ ոտքի ելաւ՝ Նորին Վե-
 հափառութենէն հրաման խնդրելով պատուհանը փակե-
 լու: Ապտիւլ Համիտ ալլալած, սոսկումի շարժում մը
 ունեցաւ, և արագօրէն ձեռքը սահեցուց զէպի բեկով:
 վեր մը որ ժողը կը գտնուէր՝ թաշկինակին մը տակ
 ծածկուած: Աքիֆ փաշա տեսաւ շարժումը և փութաց
 տեղը նստելու, ինչ որ բարեբաղդաբար, փարատեց Նու-
 րին Վեհափառութեան երկիւղը:

Ուրիշ անգամ մը, Սամսի իշխան հանգուցեալ Ա-
 տտսիտէս փաշայի շնորհուած ունկնդրութենէ մը յետոյ,
 այս վերջինը, պատշաճութեան կանոններուն համաձայն,
 ետ ետ կ'երթայ՝ սովորական խմորահոսութիւնները ընե-
 լով, երբոր ոտքը զրանը սեմին եկաւ եւ թիչ մեաց որ
 վար իյնար: Իր հաւասարակշռութիւնը գտնելու համար
 ըրած շարժումը սարսափահար ըրաւ Ապտիւլ Համիտը
 որ գիժացի գրան ժող ստքի կեցած էր, ու մէկ ձեռքը
 իր ահաւոր գրպանը խոթելով, միտովը զրանը կ'ածակը
 բռնեց, որուն ետեւ ուրուականի մը պէս անյայտ եղաւ:

Փատիշահին անվստահութիւնը ոչ մէկուն համար
 բացառութիւն կ'ընէ, և մինչև իր մտերմներուն կ'եր-
 թայ: Գիշեր մը, զործի համար իրեն ժող կանչելով իր
 սենեկապանը Բադրպ պէյ, սուլթանը խօսակցութեան
 միջոցին անոր հրամայեց իր սիկտէթը վառել: Բադրպ
 պէյ փութաց հնազանդելու. բայց այն միջոցին ուր ան-
 կողմին վրայ կը հակէր՝ յուզիկն ժողեցնելու համար,
 սուլթանը, սոսկումէն խելայեղ, անոր թեւերը բռնեց
 և ուժգնօրէն սեղմած պահեց, — մտքէն յանկարծ սա գա-
 դափարը անցած ըլլալով թէ իր սենեկապանը կրնար
 զինքը խեղզել:

Երկիւղի եւ անվստահութեան այս յարածուն զգացու-
 ման է որ Ապտիւլ Համիտ երթալով կը նեղցնէ իր մտե-
 թիւներուն շրջանակը: Իր տանը մարդոցմէն, — իր պա-
 հապաններուն խօսքը չենք բնոր այստեղ, այլ իր քար-
 տուղարներուն եւ սենեկապաններուն, — շատ քիչին միայն
 կ'երևնայ: Փալով նախարարներուն և կայսրութեան բարձր
 աստիճանաւորներուն, ա'լ պրեթէ բնաւ չ'ընդունիր զանոնք:

Սակայն, երբոր հարկադրուած է մէկու մը ունկնդ-
 րութիւն շնորհելու, գիտէ ծածկել իր խովքը, և միշտ
 մէկ թնի վրայ ըլլալով հանգերձ, հրապարիչ քաղաքա-
 վարութիւն մը արտայայտել: Այցելուին բնդառաջ կ'եր-
 թայ, բարեացակամութեամբ կ'ողջունէ զանի, սիկտէթ
 կը հրամցնէ, և երբոր զանի յանկուցանել, հանդարտե-
 ցնել կամ խարել կ'ուզէ, առանց վայրկեան մը կանգ
 առնելու կը խօսի, շողքարթ մեծարանքներու եւ բարե-
 կամական հաւատարմութեան անուպատ հեղեղի մը տակ
 ողողելով զանի: — Գիտէ նաև, երբոր զինքը շահագրգռող
 բան մը իմանալու վրայ է խնդիրը, մտիկ բնել առանց
 ընդմիջելու և ամենամեծ ուշադրութեան նշաններով:

Փալով պաշտօնական հանդիսութեանց, — ընթրիք,
 պիտանքներու կամ նշանաւոր հիւրերու ընդունելութիւն,
 և ընդհանրապէս սմէն արարողութիւն, — Ապտիւլ Հա-
 միտ բնաւ սիրած չէ և հարկաւոր տարհապարհակի պէս
 կ'ընդունի ատոնք: Կարևոր անձնաւորութիւն մը — օտար
 իշխան մը կամ պետութեան մը ներկայացուցիչը — ըն-
 դունելէ առաջ, սուլթանը նման այն բանաստեղծներուն
 որոնք հանդարտ զլիով կը շարադրեն իրենց ամենէն
 սխրալի յանպատրաստիցները, խնամով կ'օտաւմասիրէ
 ունենալիք խօսակցութեան նիւթը, և, այդ գովելի զգու-

շուքեան շնորհիւ, երբեք բացը չմտալով, յաճախ իր խօսակիցը կը զարմացնէ ամենէն ալլազան խնդիրնե-
րուն մէջ ցոյց տուած ձեռնհասութեամբը:

ԺՈՐԺ ՏՈՒՒՍ

ՎԵՐՋ

ԹԻԽԻՒԿԻՈՅ ՉՈՐՍ ԿՈՂՄԵ

Արեւելեան խնդրին այս սահմապող օրերուն շատ ուշագրաւ նորութիւն մը կը թուի Էտուարդ Թագաւորին անձնական միջամտութիւնը Թիւրքիոյ բարեկարգութեան խնդրին մէջ: Անգլիոյ նոր վեհապետը սուլթանին նամակ մը կրելով «Չերմապլե յան ձնուրսում է» վարչական բարեկարգութեանց ներմուծման փութացուցը:

Անսպասելի կ'երևեր այսպիսի յանկարծական յոր- գորանք մը որ յանձնարարութենէ աւելի բան մըն է, — ազդարարութիւն մը, ինչպէս Թալուզ ալ կը կարծէ: Սուլթանին աննպաստ նոր քաղաքականութեան մը յայտա- րար նշանը կը համարուի այս ազդարարութիւնը: Անգլիա 1897էն ի վեր է որ զրեթէ ձեռնպահ կը մնար Արեւելի գործերուն մէջ: Հայկական կոտորածներէն յետոյ երբ միւս մեծ պետութիւնները իրենց առևտրական կամ քաղաքական նկատումներէն մղուած սուլթանին մատ- նեցին քրիտոնէից դատը, Անգլիա միւս մինակ մտալով կարող չեղաւ բարենորոգումներու խնդիրը լուծել տալ: Արտաքին երևոյթով որքան որ ալ անտարբեր երևնային անգլիացիները, բայց եւ այնպէս դառնութիւնը սրտեր- նուն մէջ էր: Մեծն Բրիտանիա քաղաքական շարաշար պարտութիւն մը կրած էր Արեւելեան խնդրին մէջ հայ- կական կոտորածներուն առթիւ: Ազատական նախա- բարութիւն մը, Լորտ Բոզպէրիի նախագահութեամբ, անգլիական հովանաւորութեան ներքեւ առած էր Հայաս- տանի բարեկարգութեանց խնդիրը 1894ին, Սասունի կոտորածներուն առթիւ: Պահպանողական նախարարու- թիւն մը որ 1895ին ազատականներուն կը յաջորդէր Սոլզպրիի նախագահութեամբ, ո՛չ միայն իր նախորդին քաղաքականութիւնը շարունակեց, այլ և անոր հայա- սիրական ծրագիրները շատ շափաւոր գտնելով ուղեց ընդարձակել զանոնց: Սոլզպրիի շատ բարձրէն խօսե- ցաւ, մեծ կայսրութեան մը պետին արժանաւոր վեճով լեզուով, ու պատիկ աննշան իշխանութեան մը վայել շարաշար պարտութիւնը կրեց: 1894—95ին յաղթուողը հայ ազգը չէր, այլ Մեծն Բրիտանիա՝ ու յաղթականը սուլթանը չէր, այլ՝ Ռուսիա եւ Գերմանիա: Հաշիւը չը փակուեցաւ, զեռ բաց է:

Սակայն դիտուեցաւ որ Անգլիա ինչքան ալ հարկա- պրուած էր առժամայէս համակերպիլ պարագաներու պա- հանջման, զի Չինաստանի ու Հարաւային Աֆրիկէի ամենաժանր խնդիրները սպառնալից երևան կուգային, բայց եւ այնպէս սուլթանէն շժածկեց իր ներքին զգա- ցումը: Անգլիոյ վեհապետուհին միայն գտնուեցաւ որ կոտորածներէն ետքը շուզեց այլ ևս իր կամ իր ընտա- նիքին անգամներէն մէկուն կուրճը սուլթանին շքանը- շանսովը կեղտոտել: Ո՛չ տպաքէն մինչեւ իսկ Ֆրան- սայի հանրապետութեան նախագահ մը, «ժողովուրդի զաւակ» Լուպէ մը այդ անպատուութեանը յանձնառու ե- ղաւ: Անգլիոյ հանդուցեալ թագուհին որքան որ ալ քա- ղաքական ուղղութեան մէջ ազատ կը թողուր իր նա- խարարներուն ձեռքը, բայց պատուոյ խնդիրներու մէջ բացարձակ հրամանը իրենն էր: Թագուհին մահուանը ատեն Լոնտոնեան թերթերը դիտել տուին թէ Հայաս- տանի կոտորածներէն վերջը, Թագուհին այլ եւս սըր- տանց անհաշտ էր սուլթանին: Ու մենք ալ չենք մոռ- նար որ Սասունի կոտորածէն ետքը, երբ հայկական բա- րենորոգումներու խնդիրը յուզուիլ սկսաւ, սուլթանը պատ- րաստուեցաւ մասնաւոր պատուիրակութեան մը միջոցով նշաններ դրկել Կալէսի իշխանին — հիմախուան թագա-ւորին — ու արքայական ընտանիքին ուրիշ անդամներուն: Բայց Լոնտոնէն անմիջապէս հեռագիր եկաւ որ ո՛չ դե- սպանը կ'ընդունի ո՛չ նշանները: Քիչ վերջը արտակարգ դեսպան ու ազամանդակաւո նշաններ Բեդրպուրի ճամ- բայ դուրեցան:

Երբ Էտուարդ Թագաւորը Վիգթորիա Թագուհին յաջորդեց, Լոնտոնեան թերթերէն ոմանք կարծիք յայտ- նեցին թէ սուլթանը աւելի բարեացակամութիւն կը յու- սայ նոր թագաւորէն, եւ կ'ակնկալէ որ իր մօրը շափ անողոքելի պիտի չհանդիսանայ հանդէպ Մեծ—Մար- դասպանին: Վեց ամիսներ անցան այդ օրէն ի վեր ու թրքասէրներուն յոյսերը տակաւին չիրականացան: Ընդ- հակառակը, այն ինչ չինական ու Հարաւային Աֆրիկեան դժուարութիւնները զրեթէ կը հարթուին, ահա Անգլիա յարձակուած կըսկսի: Բարենորոգումի ու է թելագրու- թիւն պատերազմի զեկոյց մը կը նկատուի սուլթանին կողմէն:

* * *

Արքայական այս նամակ—ազդարարութեան լուրը կը զուգարկալի Ռուսիոյ քրիտոնէասէր նորոգ տրամադրու- թեանց: Պ. Չինովիէֆ Բեդրպուրիէն Պոլիս վերագար- ձաւ, բայց քիչ մը բարեփոխուած — թիւրքերը պիտի ըսնն շարափոխուած:

Հեռագիրները Կ. Պոլսէն բաւական ծանր լուրեր կը բերեն: Պ. Չինովիէֆ սուլթանին ներկայանալով դառ- նապէս գանգատեր է Անատոլիի եւ Մակեդոնիոյ վար- չական դժնգակ կացութեան համար: Մակեդոնիոյ հա-

մար ինչ եւ է, բայց Անատոլուն, այսինքն Հայաստանը: Սուլթանին պատասխանը շատ տարօրինակ կը թուի: Շուարած, ցնդած թէ այլ եւս յուսահատած՝ «Ինչ ընեմ, պատասխաներ է, կուսակալները խօսքս մտիկ չեն ըներ»: Այսպիսի պատասխան մը անհաւատարի լիմարութիւն մը պիտի թուէր, եթէ զայն հրատարակողը թայլոց մը եղած չըլլար:

Ո՛չ սպաքէն այս պատասխանով սուլթանը կ'ընդունի նախ՝ Հայաստանի եւ Մակեդոնիոյ կացութեանց դժնդակութեան օտուցութիւնը. երկրորդ՝ իր անկարողութիւնը կը յայտնէ. երրորդ կերպով մը գթութիւն կը հայցէ ա՛յլ ճարահատեալ: Սակայն աւելի ճիշտ պիտի ըլլար եթէ սուլթանը ըսէր որ «վալիներուն եթէ հրահանգ իսկ տամ բարեկարգութեանց համար, խօսքս մտիկ ընող պիտի չզանուի»: Ու արդարեւ անիշխանական վիճակը այնքան առաջ գտցած է որ եթէ վաղը իսկ նոր տուլթան մը գահը ելլէ եւ ուղէ քրիտոսոնից կացութիւնը բարւոցել, անհնարին է որ իր խորհրդներուն մէջ յաջողի: Ամէն անոնք որ թիւրքիոյ եւրոպական ու ասիական նահանգներու կացութիւնը մօտէն կը քննեն, միաբան են յայտարարելու թէ Պոլսոյ կեդրոնական վարչութիւնը անզօր է նահանգներուն վրայ: Բնականաբար բարիք ընելու համար անզօր, չարիքի համար միշտ զօրաւոր:

Պ. Չիտովի.Ֆ սուլթանին այս ինքնարգարացման անհեթեթ պատասխանը աննշուն պէս շիտակ Գուլը կը փոխէ: Նախարարներուն կը գանգատի եւ կ'ըսէ թէ «Ինչ է այս որ վալիները, պաշտօնեաները սուլթանին չեն հնազանդիր»: Չենք գիտեր Արտաքին Գործերու նախարարը ինչ պատասխանած է, բայց հաւանօրէն շատ շուարած մնացած ըլլալու է: Հերքօ՞ւմ տայ սուլթանին օտաճին: Ատ չըլլար: Հաստատէ: Ան ատեն պիտի ըսուի թէ Ինչպէս կառավարութիւն էք դուք:

Հայաստանի կողմէն թէն նոր տարօրինակ դէպքի մը լուրը չի լուսիր, բայց հանգարտ մահացուցման ահեղ վիճակը կը շարունակուի: Իսկ Մակեդոնիոյ կողմէն թէն դէպքերու նկարագրութիւնները կը պակսին, տիրույ չափազանց խտտութեանց պատճառաւ, բայց ընդհանուր գաղափարը որ կը տրուի այն է «նմանը շտեմունում ահեղօրէն ծանր կացութեան մէջ են քրիտոսոնեաները»: Նոյն իսկ անպիտակ մամուլին բառերն են ստոնք:

Որքան աչքի զարնող Մակեդոնացի կը գտնուի, ըլլա՛յ հարուստ, ըլլա՛յ արհեստաւոր, ըլլա՛յ ուսուցիչ, ամենքն ալ բանտերը լեցուած են, ու հարստահարութիւնը անդադրում կը շարունակուի, Առևտուր, վաճառականութիւն, գործ ամէն ինչ դադրած է: Միևնոյն ատեն մակեդոնացիները անդրդուելի յամառութեամբ կը շարունակեն իրենց դիմադրութիւնը: «Ո եւ է առիթ ձեռքէ չեն փախցներ կ'ըսէ թայլոց, թիւրք պաշտօնեաներուն հետ ինչալու համար: Հրոսախուժքեր, զինուած գիւղա-

ցիներ շարունակ կը կուսին թիւրք զինուորներուն հետ:

* * *



Հայաստանի, Մակեդոնիոյ խնդիրներուն ըով կը բարձրանայ հիմա Ալպանականն ալ:

«Ալպանիոյ խնդիրն ալ բացուած է», կը յայտարարէ թայլոց հանդիսաւորապէս իր վիէննայի քաջատեղեակ թղթակցին բերնովը:

Ալպանական խնդիրը պաշտօնապէս յուզուեցաւ Իտալիոյ խորհրդարանին մէջ, յառաջիկայ տարուան ելեւ մըտացոյցին խնդրին առթիւ: Արտաքին գործերու նախարարին Ալպանիոյ եւ անոր հետ մէկտեղ թարգմանութիւն վրայ ցոյց տուած հոգածութիւնները ժառանգորդի մը մտանշութիւնները կը թուին: Սուլթանը այդ խնամակալ բարեկամութեան համար իրար անցաւ, ու Հոսով իր դեօպանին ձեռքով Արտաքին պաշտօնատան ցաւ յայտնեց թիւրքիոյ բարեկամ պետութեան մը խորհրդարանին մէջ այդպիսի վիճաբանութիւն մը տեղի ունեցած ըլլալուն համար: Իտալիա թիւրքիոյ բարեկամ: Բայց ո՞վ է թիւրքիոյ բարեկամը, ո՞վ է թշնամին: Ո՛չ բարեկամ ունի, ո՛չ թշնամի, այլ՝ ժառանգորդներ միայն, որոնք իրենց շահերը կը խնամակալեն:

Ալպանական ինքնավարութեան մը հնարաւորութիւնը Իտալիոյ շահահնդիր թմբակահարութեամբ Ալպանացիներուն ականջներէն ներս մտած է: Ու այդ զինեալ, անհանգարտ ժողովուրդը հիմակուց կէս ապստամբ վիճակի մէջ է թիւրք իշխանութեան դէմ: Սիմոն Կրոպովիչ մը զինեալ հայրենակիցներու զուլին անցած կը վճռուէ սուլթանէն զրկուած կառավարիչ մը:

Բնականաբար Պոլիս մեծ իրարանցում մը կը տիրէ: Թէ՛ Ալպանիացիներուն, թէ՛ Իտալացիներուն դէմ զգուշաւորական միջոցներ ձեռք կ'առնուին: Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են նոյն իսկ Ալպանիոյ մէջ, ինչպէս Պոլիս ալ: Փախստական Իսովալի ֆէմա էֆէիտիին հետ սերտ յարաբերութեան մէջ կը գտնուին Ալպանիոյ երեսիլիները, ուստի իբր յեղափոխ կը նկատուին: Սուլթանին համար զոքադտութիւնը հոն է որ իր կեանքը ալպանիացիներուն ձեռքն է, ուստի անոնցմէ թշնամութիւն մը իրեն մահացու կրնայ ըլլալ: Բայց ինչ ընէ: Իօյամական զգացումը զոր սուլթանը այնքան օտարապէս զրգոցեց, ահեղ ընդդիմադրութիւն կը պահանջէ թէ՛ Մակեդոնիոյ, թէ՛ Ալպանիոյ մէջ ու եւ տրնձողութեան դէմ: Եթէ սուլթանին անձը մահուտական շահերուն հակառակ է, այդ անձը կրնայ մէջտեղէն վերցուիլ: Կ'երևի թէ յուսահատական շուարում կը տիրէ Երլազ:

Առ այժմ, մինչ մէկ կողմէն ալպանիացիներուն դէմ խիստ միջոցներ ձեռք կ'առնուին, միւս կողմէն Իտալիոյ դէմ ալ պատերազմի մը պատրաստութիւնները



փութանակի առջ կը տարուին, մէկ կողմէն թէ՛ Մակեդոնիա, թէ՛ Ալպանիա զօրք կը զրկուին, ինչպէս նաեւ զինուորական յանձնախումբերը, միւս կողմէն ամբողջութեամբ արագաբար կը վերանորոգուին, զէպի Ագրիական ասանոց հին պողոտաները, որոնք ըլլում էին, կը վերաշինուին, որպէս զի Օսմանեան զօրաբանակները կարելի ըլլայ շուտով փոխադրել: Եւրոպական թիւրքիոյ ամէն կողմ ահեղ պատրաստութիւններ կը տեսնուին: Թիւրքերը որոշած իր թուին՝ յուսահատ մարտնչուած իր յետոյ՝ տեղի տալ Եւրոպական թիւրքիոյ մէջ:

Կ'երևի որ թիւրքիա յոյսեր զրած է Աւստրիոյ վրայ որոն շուրջը բոլորուած են Ռուսիան եւ Յունաստան: Ալպանիոյ համար Աւստրիա՝ իտալիոյ մրցակից է, ի Մակեդոնիոյ համար՝ Ռուսիոյ: Թիւրքիա այդ մրցակցութիւններէն օգտուել կ'աշխատի: Բայց սա յայտնի է թէ այդ մրցակցութիւնը ոչ թէ թիւրքական շահերու պաշտպանութեան համար է, այլ Աւստրիականներուն, որոնք բնաւ չեն համաձայնիր թիւրքականներուն: Ես ասնեմ, զան շաննեսի խնդիր է, և ոչ թէ Եւրոպական թիւրքիան օսմանցիներուն ձեռքը պահել տալու հոգածութիւնը:

Ահեղօրէն խոստովանելից թուականի մը կը պատրաստուինք սերմն:

ԼՈՒՐԵՐ

ԵԸԼՏԸԶ ՀՐԴԵՀԵՄԼ. Եստ ծանր շուր մը, բշու մին բերդին մէջ: Երկրորդը, սուրբանին հարեմը, նոյն իսկ անոր ներստեկեակին քովի սեկեակը կրակ ձգուեր է: Դիւրին է երևակայել սուրբանին սարսափը: Յանկարծակիի եկած գիշերանց կը ձգէ կը փախի պաշտին ոտիչ մէկ մասը: Հրշէջները կը վազեն կուգան, ու մօտ ծամ մը աշխատելով հագիտ կրնան կրակը մարել: Սուրբանը անարեկ, պաշտուր տակնուվրայ եղած են, տարակոյս չէ մնացած թէ այս կրակը դիտմամբ հրկիզութիւն է: Ի՞նչ խիստ քննութիւն բացուեր է, բայց «մեղաւոր ձեռքը» մենք պիտի ըսենք «արդար ձեռքը» չէ գտնուած: Այս գաղտնապահութիւնը աւելի եւս ընկձեր է սուրբանը: Այսպէս ոտնով՝ հսկասակ այնքան ահաւոր զգուշութեանց, բշուսին միևնույն իսկ իր պատկած սեկեակը կրքուայ մօտեկայ եղեր: Ոչ մէկ մը որ հրձիգութեան միջոցով մարտնչուեր սկսի սուրբանին դեմ, հետեւանքները ոչ ոք կրնայ գոչակել:

ՉԵՐԲՍԵՆԼՈՒԹԻՒՆՆԵՐ. Կարգը անուստնուելու թու էկաւ: Վիեննայէն կը ձեռագրուի թէ յունիս 24 եւ հիւզարբի օրը Պոլիս բազմաթիւ Ալպանիացի երևելի:

ներ ձերբակալուելով Երկրորդ տարուեր են հարցաքննութեան: Ասուք իրր Ալպանիական քովիքի մը անգամ անբաստաններ են: Միակամայն իրեկց վրայ կասկած կը ծանրանայ թէ փախստական իտալիէ Բեմայ պէյին հետ յարաբերութիւն ունին: Բանտարկուածներուն մէջ են համբաւաւոր Ալի փաշային բոսը և Վալովեսի Եւրի փաշան:

ՍՐՏՈՒՈՅ ՊԱՀՁՆՉՈՒՄ. Երկրորդէն Եւրոպայի օստնեկան դեսպաններուն խիստ հրահանգներ զրկուեր են որպէս զի զսեւզան երկիրներ ապաստանեալ քաղաքական փախստականները՝ իրր պարզ յանցաւորներ՝ շատ մը ձերբակալել տուն և անմիջապէս Պոլիս զրկեն: — Ահա միևնույն ոտը կը հասնի սուրբանին խելքը, Եւրոպայի հետ քսանեկեկ տարուան անդադար յարաբերութեան կտրը:

ՌՈՒՊԻՈՅ պատերազմական տուգանքին և առաստապատեկերէ կրած վեասներուն ի հաշիւ թիւրքիա այս օրերս 193,000 ռուկ ևս վճարեց:

ՄԱԿԵՏՈՆԻՍ. քննիչ յանձնաժողով մը զրկելով, վիճակին մօտեն տեղեկութիւն ստանալու եւ ըստ այնով բարեկարգութեանց ծրագիր մը պատրաստելու որոշում տուած է Դոնար: Փախուտի հին միջոցը:

ՊԱՀՏՄՏԻ ԵՐԿՒԹՈՒՂԻՆ. Ռուսիա որքան որ ալ Հայաստանի երկարաշրջիներու շինութեան մեկնաշնորհը ստացած ըլլայ, բայց և այնպէս կը հասկասակը Պաղտատի գծին շինութեանը Գերմանացիներուն կողմէ: Տեղի Նիւզ կը հաղորդէ թէ սոսք քրամատիւներ համաձայնութիւն գոյացուցած են գերմանացիներուն հետ շինութեան մասնակցելու համար, հետեւաբար Պաղտատի գիծը պիտի շինուի գերման, ֆրանսացի, սոսք ընկերութեան մը միջոցաւ: Անգլիացիները դուրս կը մնան:

ՆՈՐ ՀԱՍԵ

«ՆՈՐ ԿԵՄՆՔ»-ի վերաբերեալ նամակ ու բաժանակի զրկել հետեւայ հասցէին:

REDACTION DU "NOR-GUANK,"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵՄՆՔ-ը հրատարակուի ամէն ամսու 1 ինչ և 1 Տին: Բաժանակին է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 և վեցամսեայ 1 տոլար: